

ԱԲԽԱԶԻԱՅԻ Ա. Ս. Խ. Հ. ԼՈՒԺԹՈՂԿՈՄԱՏ

ԾՐԱԳԻՐ ԿԻՍԱԳՐԱԳԵՏ- ՆԵՐԻ ԴՐՈՌԻ ՀԱՄԱՐ.

Թարգմ. Ս. Խոչատրյանի.

ԱԲՊԵՏՏՐԱՏ.

ՍՈՒԽՈՒՄ

1934 թ.

379
5-98

15 MAY 2013

08 APR 2010

ԱԲԽԱԶԻԱՅԻ Ա. Խ. Հ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

379

5-98

1

1004
31562

୧୦

ԵՐԱԳԻՐ ԿԻՍԱԳՐԱԳԵՏ-
ՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ.

Թարգմ. Ա. Խաչատրյանի.

ԱՐՄԵՏՏՐՈՍ.

ՍՈՒԽՈՒՄ

1934 p.



Единая программа для школ
малограмотности
Перевод С. Хачадурян.

ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒՆ ՔԱՂԱՔԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԻ ԿԻՍԱԳՐԾԳԵՏ-
ՆԵՐԻ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

Բ Ա Յ Ա Տ Ա Կ Ա Ն Յ Ո Ւ Ց Մ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր :

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ
ԽՆԴԻՐՆԵՐԸ :

Մայրենի լեզվի դասերը պիտի զինեն հասակավորին
հեշտ և հասկանալով կարդալու կարողությամբ, իր մտքերն
ուրիշների համար հասկանալի ձեռվ արտահայտելու կարո-
ղությամբ:

Մայրենի լեզվի պարապմունքները պիտի ապահովեն
աշակերտների ընդհանուր գրագիտության խսկական ամրա-
պնդումը:

Հասակավոր աշակերտներն այդ պարապմունքներին
պիտի սովորեն կարդալ և զիրք, և լրագիր: Նրանք պիտի
ձեռք բերեն գործնական հոդվածների և գրական—զեղար-
վեատական յերկերի մեջ կողմնորոշվելու հմտություն: Նր-
անք պիտի սովորեն գրել պարզ ձեռագրով և քերակա-
նորեն անսխալ: Պիտի ստանան իրենց բանավոր և գրավոր
խոսքը ճշտորեն կառուցելու հմտություն: Սկզբնական ծա-
նոթությունը քերականության ելեմնտների հետ հասա-
կավորներին հենարան պիտի տա՝ բանավոր և գրավոր խոս-
քից գիտակցաբար ոգտվելու համար, պիտի ոգնի ըմբռու-
նելու լեզվական յերևույթները:

Ծրագրում տրվում ե սիստեմատիկ պարապմունք-
ների ձիշտ կերպով սահմանագծված շրջան՝ մայրենի լեզվից:
Հարցերի ծրագրով սահմանագծված շրջանի սահմաններում
աշակերտները պիտի ստանան հաստատուն գիտելիքներ և
ունակություններ: Աշակերտները պիտի սովորեն կիրառել
այդ ունակությունները իրենց հասարակա—քաղաքական
և արտադրական կյանքում, իրենց ամբողջ գործնական
աշխատանքների մեջ:

ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ներկա ծրագիրն իր բովանդակությամբ հանդիսանում է գրագիտության դպրոցի շարունակությունը:
Ամբողջ ծրագրին արվում է 150 ուսումնական ժամ: Ծրագրի նյութը դասավորված է ըստ յերկու շրջանների և բաժինների:

Ծրագրի դասավորումը շրջանների՝ յերկու նորատակի յե հետևում, ա) ոգնել ուսուցչների ծրագրային նյութի պլանվորման մեջ և բ) աշակել դասարանի ճիշտ կերպով լրակազման մեջ:

Ծրագրի ամբողջ բովանդակությունը դասավորված է ըստ հետևյալ հիմնական բաժինների, ա) ընթերցանության ունակություններ, բ) գրավորի տեխնիկա և ուղղագրության ունակություններ, գ) քերականության ելեմենտներ, դ) աշխատանքը լրացրի և զրքի հետ, յե) բանափոր և զրավոր խոսքի զարգացում: Ծրագրային բովանդակության այսպիսի սահմանափակումը, ինարկե, չի նշանակում, վոր հարկավոր և պարագել առանձին՝ ընթերցանությամբ, առանձին՝ զրավորով և առանձին՝ քերականությամբ, արականությամբ: Ծրագրին իր ստորաբաժանումներով ու գրառում ե միայն ափելի ճշտորեն փորոշելու ուսումնական նյութի բովանդակությունը, ընույթը և նշանակությունը:

Ծրագրի բոլոր բաժինների մեջ պիտի ամենասերտ կապ պահպանվի: Այսպես, որինակ, անմիտ կիրակի այն ընթերցանությունը, վորը կապված չե բանափոր խոսքի զարգացման հետ, ուղղագրության վերաբերյալ պարագմունքները հաճախ կապվում են զրավոր խոսքի զարգացման հետ, իսկ քերականության ելեմենտները մեծ մասամբ հարմարեցվում են կամ ուղղագրությանը կամ խոսքի զարգացմանը Սակայն, վոչ մի գեպօրում չը պետք ե հետամտել կապ հաստատելու աշխատանքի մասերի մեջ այնտեղ, ուր այդ կապը չի կարող բնական լինել:

Ծրագրի յուրաքանչյուր բաժնի տեսակարար կիրով փորոշվում է ուսումնական ժամանակի հետեւյալ մոտափոր բաշխմամբ:

Շ ր ջ ա ն ն ե ր	Ժամանակը	
	I շրջան (85 ժամ)	II շրջան (55 ժամ)
Ժամեր (0/0)	Ժամեր (0/0)	
Ընթերցանության ունակություններ	26 (30)	17 (30)
Գրավորի տեխնիկա և ուղղագրության ունակություններ	34 (40)	19 (35)
Քերականության ելեմենտներ	13 (17)	10 (20)
Աշխատանքը լրացրի և զրքի հետ	4 (4)	2 (3)
Բանափոր և զրավոր խոսքի զարգացում	8 (10)	7 (12)

Դպրոցական պարագմունքների գլխավոր բաժինները մայրենի լեզվի մեջ հանդիսանում են՝ ընթերցանությունը և զրավորը: Մնացած ամբողջ աշխատանքը կառուցվում է այդ յերկու հիմնական բաժինների շուրջը: Գրքի և լրացրի հետ աշխատանքին հատկացվում է ընդամենը 4 ժամ՝ առաջին շրջանում և 2 ժամ՝ յերկորդ շրջանում: Իսկ զրքի և լրացրի հետ աշխատանքների ունակությունների ամրապնդման համար, ոգտագործվում են ընդհանուր ընթերցանության ժամերը և արտադպրոցական աշխատանքի ժամերը:

Մոտավորապես այդպիսի զրության մեջ ել գտնվում են և խոսքի զարգացման վերաբերյալ պարագմունքները: Այդ պարագմունքներին քիչ ժամանակ և հատկացված: Ուսուցիչը լիակատար հարավորություն ունի խոսքի զարգացման համար ոգտագործելու և քերականական պարագմունքներ, և ընթերցանություն:

Սակայն անհրաժեշտ է հիշել, վոր ժամանակի ավյալ դասավորումը հանդիսանում է լոկ մոտավոր չափի և դեռ ընալ ստուգված չե գործնականություն:

Բացի այսեղ դասավորված ժամանակից քաղաքի դպրոցներում 10 ժամ առանձնապես հատկացվում է զրական ընթերցանությանը՝ 5 ժամ առաջին շրջանում և 5

բանիների մասին (գոյական անուն, ածական անուն և բայ) և նրանց փոփոխվելու ձևերի մասին (ընդհանուր դադարակար հոլովումների և խոնարհումների մասին):

ԾՐԱԳՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԱՐԱՊՄՈՒԽՆԵՐԻ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ընթերցանության ունակություններն ավելի լավ են զարգանում դպրոցում մտքի մեջ և բարձրածայն ընթերցանության համաչափ զուգակցության ուղղով:

Մինչև վերջին ժամանակներս ել կիսազրագետների դպրոցում աշխատանքի ամենատարածված ձևն եր բարձրածայն շրջանաձև ընթերցումը: Սակայն հատուկ հետազոտություններով և մասսայական փորձերով ապացուցված է, վոր այդ մեթոդը աչքի յե ընկնում իր բազաթիվ թերություններով.—ինքնուրույն ընթերցանության ունակությունների զարգացման համար անբավարար են, դժվարացնում ե բովանդակության միաքը հասկանալը, և այն Ամենից ընդունելի մեթոդը պիտի համարել ներկայումս համակցական (կոմբինինացիոն) մեթոդը բարձրածայն և մտքում կարդալու վերաբերյալ:

Պարապմունքների առաջին շրջանում, յերբ ընթերցանութայն տեխնիկան գեռ թույլ է կիսազրագետների մեջ, աշակերտները պիտի առավելապես կարդան բարձրածայն: Բայց հետազայտմ անհրաժեշտ է ավելի շատ տեղ հատկացնել մտքի մեջ ընթերցանությանը: Մտքի մեջ ընթերցանությամբ ավելի ճիշտ և իմաստալից կերպով ե նախապատրաստվում բարձրածայն ընթերցանությունը իմաստալիության բարձրացմանը ոժանդակում են նաև ստուգիչ հարցերը կարդացածի վերաբերյալ:

Լրագրի և գրքի հետ աշխատանքը, դպրոցում ծագալում ե աստիճանաբար: Նախ ընթերցանության ընդհանուր պարապմունքների ընթացքում աշակերտներն ուսուցչի դեկավարության տակ ծանոթանում են գրքի արտաքիննշանների հետ (վերնագրի, հրատարակչության տարեթիվ և այլն), ծանոթանում են լրագրերի հետ, սովորում են գտնել հարկագոր տեղերն՝ ըստ վերնագրերի: Հետազայտմ, աշխատելով իմաստալիության բարձրացման վրա, աշակերտ-

ները յուրացնում են մտացածին ընթերցանության տեխնիկան, սովորում են կատարել քաղվածքներ և դիտողություններ, ընթերցանության ժամանակ կազմել պլանը: Պարապմունքների վերջում աշակերտները պիտի սովորություն դարձնեն և հմտություն ձեռք բերեն դպրոցից դուրս՝ զիրք և լրագիր կարդալու մեջ: Դրան աջակցում են, արտադպրոցական ընթերցանությունը, ուսուցիչ առաջադրությունների առթիվ, կարդացածի մասին հաշվետվությունները դասարանում և այլ նման աշխատանքները:

Բայց զբանից աշակերտները պիտի ծանոթանա գրադարանից ոգտվելու կանոնների հետ: Ուսուցչիր պիտի մի պարտադիր նպատակ դնի իրեն:—ուսուցման վերջում, իր աշակերտների կարելույն չափ մեծ մասին, ներգրավի գրադարանի մշտական ընթերցանությունների թվի մեջ:

Բանավոր և գրավոր խոսքի զարգացումը հարկագոր և տանել՝ թե բառապաշտի ընդլայնումով, թե՝ նախադասության վրա աշխատանքով, թե՝ պաշտոնական խոսքի ձևերի հետ ծանոթացնելով (պաշտոնական գրության, բանավոր յելույթների), և թե՝ լրագրական թղթակցությունների և հոդվածների վրա աշխատանքով:

Աշխատանքը բառի և նախադասության վրա կարելի յե սկսել հենց առաջին պարապմունքներից:

Բառապաշտի հարստացումը ձեռք և բերվում հոմանիշը բառերի վրա աշխատանքով, կարդացած ընազրի նոր բառերի առթիվ բացատրություններ գրելով, դասակարգայնորեն - խորթ, զործածությունից դուրս ընկած բառերի և նոր, նորածին բառերի համեմատական վերլուծությամբ:

Նախադասությունը ձշությամբ կառուցելու հմտությունը ձեռք և բերվում հարցերի պատասխաններ կազմելով, համառոտ նախադասությունների ծավալումով, ընդարձակ նախադասությունները համառոտելով, տվյալ բառերից նախադասություններ կազմելով և այլն:

Պաշտոնական գրություններ գրելու, ժողովներին յելությներ ունենալու և լրագրի համար թղթակցություններու հոդվածներ կազմելու հմտությունները տմենալավ կերպ պով ձեռք են բերվում նմուշներ ցույց արտվ և առանձին որինակների վերլուծությամբ:

Գրավորի տեխնիկան և ուղղագրությունը պահանջում էն առանձնապես մանրազնին և հաջորդական վարժությունները: Գրավորի տարրական տեխնիկայի մշակմանն աջակցում են գիտակցական արտագրության զանազան ձեերը՝ ուղղի նստվածքի և ձեռքի շարժման ու ձեռագրի վրա ուշագրություն դարձնելու պայմաններում:

Ուղղագրության ունակությունները մշակվում են տարրեր միջոցներով կախված առանձին ուղղագրական մոմենտների առանձնահատկություններից: Վորպես կանոն, յուրականչյուր ուղղագրական մոմենտի մշակումը սկսվում է դիտողությունից և վերլուծությունից, անցնում է յեզրակացությանը և վերջանում ե բավականաչափ քանակությամբ վարժություններով: Ուղղագրական վարժություններն ըստ հնարավորության պիտի հենվեն և լուղական, և տեսողական, և մուտքային հիշողության վրա, նաև հասակավոր աշակերտների մտածողական ընդունակությունների վրա:

Բնագրի իմաստալից վերլուծությունը բոլոր այդպիսի վարժությունների ժամանակ պարտադիր ե:

Ավելի ընդհանուր ուղղագրական աշխատանքներից կարելի յենշել գննական թերզրությունը և տվյալ կանոնի վերաբերյալ բառերից նախադասություններ կազմելը:

Ծրագրը հանձնարարությ և ուղղագրական պարագաների վրա սիստեմ, վորոշ հաջորդականություն, վորոնք առաջին հերթին արդարացվում են մեթոդական նպատակահարմարության գիտակցությամբ: Առաջայն աշակերտները դպրոցական պարագաների հենց առաջին որերից ընդհարվում են ուղղագրական դժվարությունների խմբավորման հետ: Այդ դժվարությունները հաշվի չառնելը, պատճառ բերելով ծրագրային հաջորդականությունը, կրկներ նույնքան աննպատակահարմար, վորքան և առաջարկված սիստեմի խախտումը ընթացիկ կարիքների խաթրու:

Զեղովելով աշխատանքի նշած պլանից, ուսուցիչն ամեն անգամ պիտի առաջն առնի և ուղղի սիստեմները, նույնիսկ այն դեպքում, յերբ նրանք վերաբերվում են դեռ ևս չանցած կանոններին: Այդպիսի դեպքում, ստկայն, ուսուցիչը չպիտի հափշտակվի հետագալի վերլուծություններով, այլ սահմանափակվելու յե գործնական ցուցմունքներով:

Հիմնականում նույնը պիտի ասել և այն ուղղագրական մոմենտների մասին, վորոնք բնավ չեն մտել կիսագրագետների գլուխոցի ծրագրի մեջ: Հաշվի առնելով ուսուցման ծայրահեղ սղմվածությունը, ծրագրը վորոշ ուղղագրական մոմենտներ չի առաջադրում սիստեմատիկ մշակման համար:

Բայց նրանք ել չպետք ել լիովին զանց առնվեն ուսումնական պարագաներում: Յեկ այդ՝ ծրագրում չնախացածների պեղերում ևս, ուսուցիչը պիտի նախազգուշանի և ուղղի սիստեմները, չզբաղվելով, ստկայն, հատուկ վերլուծություններով և վարժություններով, վորոնք պարտադիր են միմիայն ծրագրային նյութի վերաբերյալ:

Քերականության եթեմենտները նշանակալից չափով մշակվում են՝ կապված ուղղագրության և գրավոր խոսքի զարգացման հետ:

Առաջին շրջանի սկզբներում աշակերտները հասկացողություն են ձեռք բերում նախադասության մասին: Այստեղ նրանք պիտի իմանան, վոր մեր լեզուն կազմված և նախադասություններից, իսկ յուրաքանչյուր նախադասություն աչքի յե ընկնում իմաստալից և առողանային վերջագործությամբ, նախադասության մեջ բոլոր բառերը կապված են միմյանց հետ իրենց իմաստով:

Կանգ առնելով համառոտակի այն հարցի վրա, թե նախադասությունը կազմված ել լինում բառերից, իսկ ամեն մի բառը՝ վանկերից ու հնչյուններից, աշակերտները ուղղագրական պարագաներուն կազմված են հնչյունների հետ և նրանց գրավոր ձեակերպման հետ: Յերկրորդ շրջանի վերջում կրկին վերադառնում են նախադասությանը: Այստեղ աշակերտները ծանոթանում են նախադասության կազմի հետ (գլխավոր և յերկրորդական բառեր) և նախադասության տեսակների հետ (համառոտ և ընդգրածակ, լրիվ և կիսատ):

Մասունք բանիների մասին պիտի գաղափարը տալ թե բատ իրենց նշանակության և թե բատ ձեսկան հատկանիշների: Գոյական անունների հետ ծանոթությունը պիտի սկսել առարկայի անուն ցույց տվող բառերից (սեղան, դաշտ, բանվոր): Իսկ հետո աշակերտների ուշագրությունը պիտի դարձնել այնպիսի գոյականների վրա, վորոնք ա-

ուարկայի անուն չեն ցույց տալիս (գեղեցկություն, սոցակցություն): Աշակերտները պիտի իմանան, վոր ամեն մի գոյական անուն ցույց ե տալիս կամ յեղակի թիվ, կամ հոգնակի: Պիտի ցույց տալ, վոր գայականները փոփոխվում են ըստ հոլովների, կախումն ունենալով, դրա համար, մյուս բառերից: Այս դեպքում հարկավոր ե ծանոթացնել աշակերտներին նաև հոլովների հետ Հոլովումների առանձին տեսակներն անցնել կիսազրագետների հետ չի հարկավոր: Վարժությունների ընթացքում, գոյական անունների հոլովման ժամանակ, հարկավոր ե աշակերտների ուշազրությունը գարձնել հոլովների վերջավորությունների վրա:

Համարյա նույն ձեռվ ել պիտի անցնել և ածական անունները, միայն այստեղ պիտի նշել վոր ածականները չեն հոլովում և չունեն յեղակի ու հոգնակի վերջավորություն, և վոր նրանք կարող են հոլովիկ ու յեղակի և հոգնակի վերջավորություն ստանալ միայն այն դեպքում, յերբ գործ են ածվում գոյական անվան փոխարեն (որինակ՝ կարմիր յեղը սպիտակ յեղից ուժով ե՞ և, կարմիրը սպիտակից ուժով ե՞): Բայց մշակման ժամանակ առանձնապես ուշազրություն գարձնել բայց փոփոխությունների վրա ըստ դեմքերի և ժամանակների:

Մասունք բանիների առանձին տեսակների հետ ծանոթացնելիս անհրաժեշտ ե լուսաբանել նրանցից յուրաքանչյուրի նշանակությունը լեզվի կառուցվածքի մեջ: Քերականական որենքների վերլուծությունը անհրաժեշտ և ամրապնդել հատուկ վարժություններով:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՐԱՋԻՆ ՇՐՋԱՆ:

1. Ընթերցանության ունակությունները:

1. Կարողանալ կարդալ՝ իմաստալից, ամբողջ բառերով առանց բառ բաց թողնելու, խեղաթյուրելու և ավելորդ հապաղման, պահպանելով վերջակետի առողանությունը:

2. Կարդալ՝ պահպանելով հարցական և բացականչական նշանների առողանությունը: Կարդալու ժամանակ պահպանել շեշտագրության և գրական արտասանության կանոնները:

3. Կարողանալ հասկանալ կարդացած հողվածի ընդհանությունը բավանդակությունը (մշակվում ե կարդացածի վերաբերյալ ստուգողական հարցերի ոգնությամբ):

4. Կարողանալ բնագրի մեջ գտնել տրված հարցերի պատասխանները (մշակվում ե ուսուցչի տված հարցերի վերաբերյալ քաղվածքների ընթերցման ուղիով):

II. ԳՐԱՎՈՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒ-

ԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

1. Գրավորի տեխնիկայի վերջնական ամրապնդումը ձնուագրի դրվածաքը և տառերի բաց թողնելու վերացումը):

2. Կարողանալ՝ հավասար և պարզ գրել մի գծի վրա:

3. Ազատ կերպով կարողանալ դնել վերջակետը, հարցական և բացականչական նշանները:

4. Իմանալ մեծատառի գրությունը բոլոր գեպքերում:

5. Կարողանալ ճիշտ կերպով հնչել նման հնչյունները՝ դ—կ—ք, բ—պ—փ, դ—տ—թ, ջ—ճ—չ, ձ—ծ—ց, (յերկար վարժությունների միջոցով):

6. Իմանալ „յ“ տառի գործածությանը ձայնավորներից առաջ և հետո:

7. „ը-ի“ գործածությունը տողագարձի ժամանակ. յեր՝ բ և գրվում „ը“ բառի սկզբում և յերը չի գրվում, բայց հնչվում է ((ը) սպասել (ը) շտապել):

III. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ:

1. Ինչ և նախադասությունը:

2. Զայնավոր և բաղաձայն հնչյունները (կրկնություն):

3. Շեշտագրությունը հայոց լեզվի՝ մեջ:

4. Նախադասության դիմակոր անդամները (յենթակա և ստորոգյալ):

5. Նախադասության տեսակները (համառոտ և ընդարձակ, պարզ և բարդ, լրիվ և թերի):

IV. ԱՇԽԱՏԱՆՔ ԼՐԱԳՐԻ ՅԵՎ ԳՐՔԻ ՀԵՏԸ:

1. Ծանոթություն լրագրի բաժինների մասին (ծանոթացնել գյուղացիական թերթի հետ, ըջանային, գործարանային լրագրերի հետ):

2. Ծանոթյություն գրքի մասին՝ ըստ նրա հեղինակի, վերնագրի և հրատարակության տարեթվի:

3. Արտադպրոցական ընթերցանություն՝ հասարակաքաղաքական, արտադրական—տեխնիքական, բնական—գիտական և գրական—գեղարվեստական գրքերի՝ վերցնելով այն նորուկնակ ընթերցողների գրադարանից:

4. Գրքի ցանկից ոգովելու հմտություն (ընդհանուր գաղափար կազմելու համար բովանդակության մասին և հոդվածի առթիվ հարկավոր դլուխները գտնելու համար):

5. Գրք և լրագիր կարգալու ժամանակ բառարանից ոգովելու հմտություն:

Վ ԲԱՆԱԳՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ:

1. Իր մաքերը ճշտությամբ արտահայտելու հմտություն (մշակվում ե ուսուցչի տված հարցերին բանագոր և գրավոր պատասխանների միջոցով):

2. Աշակերտների բառապաշարի ընդլայնումը (գաղափար տալ՝ արտադրական—տեխնիքական և հասարակական քաղաքական նշանակություն ունեցող նոր բառերի մասին, անհասկանալի բառերի բառարան կազմելը):

3. Տվյալ բառերից նախադասություն կազմելու հըմտություն: Տվյալ բառերից փոքրիկ պատմվածք կազմելու հմտություն:

4. Անկետա լցնելու, ստացական և հավատարմագիր գրելու, սոցմքցակցության պայմանագիր կազմելու՝ հմտություն:

ՑԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՅԵՐ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԵՐ:

1. Ուժեղացնել և բարձրացնել արագ և ճիշտ կարգացությունները:

2. Ընթերցում՝ պահպանելով առողջանության և դադարի կանոնը՝ կախված արոհության նշաններից (միջակետ, բութ, ստորակետ, վերջակետ), բացահայտության նշաններից (չակերտ, փակագիծ, կախման կետ, բազմակետ, անջատման գիծ և այլն), և ստքից:

3. Շարադրանքի հաջորդականության մեջ կողմնորոշ-

վելու հմտություն (մշակվում ե ըստ պլանի—ընթերցանության միջոցով):

4. Կարդացածը տվյալ պլանով համառոտ պատմելու հմտություն:

5. Կարդացածը ընդհանրացնելու, կարդացած հատվածի հիմնական միտքը համառոտակի ձևակերպելու հմտություն (մշակվում ե հոդվածի մասերի համար վերնագիրներ կազմելու միջոցով՝ կարդացածի պլանը կազմելու միջոցով):

ԳՐԱՎՈՐԻ ՏԵԽՆԻԿԱՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

1. Ածանցյալ բառերի ուղղագրությանը:

2. „Ե“ գործածության բոլոր դեպքերը (յերբ ձայնավորով վերջացող բառից հետո յեկող բառը սկսվում ե „Ե~ով. „Ե, յա, յո, յու“ յերկբարբառները. յերբ „Ե~ից հետո այլ ձայնավոր ե գալիս, մեջ տեղը „Ե“ չի գրվում.—միլիոն, Դանիել, Ավստրիա և այլն):

3. Յերկու „Ե~ի գործածությունը հոգնակի թվով բառերում („Ե~ով վերջացող բազմավանկ բառերում):

4. Զակերտների գործածությունը ուրիշի խոսակցության ժամանակ՝ միջակետից հետո:

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԸ:

1. Ինքնուրույն և ոժանդակիչ բառեր: Ոժանդակիչ են՝ նախդիրները, վերջադիրները, շաղկապները: Նախածանց, վերջածանց:

2. Ընդհանուր հասկացողություն տալ հիմնական մասունք բանիների, և նրանց նշանակության մասին (գոյական անուն, ածական անուն, բայ):

3. Իդական սեռով բառեր (ըստ վերջավորությունների —ուհի, դուխտ, անուշ և այլն): Գոյականների վերջավորությունների փոփոխությունը ըստ թվերի և այլ բառերի հետ գործածության ժամանակ (հասկացողություն տալ հոլովերի և հոլովումների մասին):

4. Ածականների անփոփոխ դրությունը նախադասության մեջ (չի հոլովում, հոգնակի վերջավորություն չու-

նի). Նրա փոփոքությունը՝ ըստ թվերի և հողովածերի՝ յերբ գործ ե ածվում գոյականի փոխարեն:

5. Բայերի փոփոխությունը՝ ըստ դեմքերի, ժամանակ-ների և թվերի (ընդհանուր գաղափար տալ):

ԱՇԽԱՏԱՆՔ ԼՐԱԳՐԻ ՅԵՎ ԳՐՔԻ ՅԵՏ:

1. Կարողանալ համառոտ տեղեկություններ տալ լրա-գրի մի 2—3 համարում կարգացած հոդվածների մասին (մշակվում ե արտադպրոցական ընթերցանության ժամա-նակ լրագրում կարգացածների մասին համառոտ գրանցում-ներ կատարելու միջոցով—ըստ ուսուցչի առաջարկություն-ների):

2. Արտադպրոցական ընթերցանություն՝ հասարակա—քաղաքական, արտադրական—տեխնիքական, բնական—գի-տական և գրական—գեղարվեստական զրքերի՝ վերցնելով այն նորուկանակ ընթերցողների գրադարանից:

ԲԱՆԱԳՈՐ ՅԵՎ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ:

1. Բառապաշտական վերաբերյալ աշխատանք-ների շարունակությունը (նշանակությամբ մոտիկ—հոմա-նիշ բառերի ընտրությունը, հոմանիշ բառերից ընտրել տվյալ գեղաքերի համար համեմահամապատասխանները, համեմատության դնել դասակարգայնորեն խորթ բառերը՝ նոր բառերի հետ և այլն):

2. Ժողովի մասին հայտարարություն գրելու հմտու-թյուն:

3. Ընթերցանության ժամանակ պլան կազմելու հըմ-տություն:

4. Բանավոր յելույթի պլան կազմելու հմտություն:

5. Համառոտ լրագրական թղթակցություն և փոքրիկ հոդված կազմելու հմտություն:

ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ (10 ԺԱՄ):

Բ Ա. Ց Ա. Տ Ա. Կ Ա. Ն Ց Ո Ւ Ց Մ Ո Ւ Ք Ն Ե Բ.

Գրական ընթերցանությունը կիսազբագետների դպրո-ցում, չափազանց սղմված ժամանակի կողմից և հետեւ-

պես, մշակվելիք յերկերի քանակի կողմից, հանրագումա-րում պիտի տա՝ ինքնուրույն ընթերցանության և աշա-կերտների կողմից գեղարվեստական գրականության յուրաց-ման համար անհրաժեշտ գեղարվեստական գրականության մասին տեղեկությունների հայտնի մենիմումը:

Այդ մինիմումը պիտի կազմված լինի յերեք հիմնա-կան գրություններից:


1) Գրականության իդեոլոգիական նշանակության, նրա գիտակցողական և դաստիարակչական արժեքի կա-ցողությունից:

2) Գրականության սպեցիֆիկ առանձնահատկություն-ների՝ պատկերավորության և նրանց նշանակության,— հասկացողությունից:

3) Գրականության գասակարգային բնույթի և, հե-տեւագես, դեպի նա քննադատական վերաբերմունքի ան-հրաժեշտության՝ հասկացուղությունից:

Գրականությունը վարպետ կյանքի արտացոլումը, գրա-կանությունը՝ վորպետ կյանքի արտացոլումը դեմքերի մեջ, գրականությունը՝ վորպետ կյանքի դասակարգային արտա-ցոլումը գեմքերի մեջ—ահա հիմնականը, վոր պիտի յու-րացնի աշակերտը: Աշակերտը ամենից առաջ բերվում է այն հասկացողությանը, թե գրականությունը ընդլայնում է նրա մտահորիզունը, փորձառությունը, գիտությունը, թե կյանքի այդպիսի գիտելիքների շնորհիվ մենք կարող ենք ավելի լավ գործել այդ կյանքում, թե ճանաչելով անցյալը՝ մենք ավելի լավ կկազմակերպենք մեր կյանքը: Աշակերտը համոզվում է գրականության գիտակցողական և, հետեւ-պես, ներգործական նշանակության մեջ (գիտելիքները՝ ճորտատիրական իրավունքների, կապիտալիստական ֆար-բիկաների մասին և այլն, մենք ավելի լավ ենք հասկանում և գնահատում այն, ինչ վոր բերեց աշխատավոր մասսա-յին հեղափոխունը և այլն):

Յերկերի վերլուծության ժամանակ աշակերտը ճանա-չում է կյանքի արտացոլման սպեցիֆիկ կողմերը: Կը շ-վում են կյանքի այն կողմերը, վորոնք չեն արտացոլված, որինակ, գասագրում կամ լրագրում (կենցաղը, մարդու ներքին ապրումները, նրա արտաքինը, հագուստը, մտքերը, շըշապատը և այլն): Ենց արտացոլման բնույ-



թը, նրա կենսալիությունը (կրնկրետ մարդ, կրնկրետ դիպված), պարզությունը, պայծառությունը, միենույն ժամանակ նշվում ե, վոր այդ կենսալիությունը լուսանկարչություն չե, այլ տիպլիքականություն, հանրայնություն, մատնանշվում ե գեղարվեստական հնարանքը, վոր կիրառում ե գրողը։ Այդ բոլոր առանձնահատկությունները բնորոշում են գրականությունը՝ վորպես կյանքի արտացոլման մի առանձնահատուկ ձե, վորը ոգնում է մեզ ճանաչել կյանքը և գործել նրա մեջ։

Գրողը արտացոլում է այն, ինչ վոր հետաքրքրում է նրան դասակարգը, Հետեապիս, նրա՝ կյանքի արտացոլումը կարող է սահմանափակված լինել նրա դասակարգային դրվագքով (սահմանումով), յեթե նա ներկայացնում է շահագործող դասակարգերը, վորոնք շահագրգութած են իրականությունը խեղաթյուրելու մեջ—այս կամ այն վերաբերմունքներում, յեթե նա մինչև վերջ չկարողացավ ձանաչել կյանքը և այսն: Այստեղից անհրաժեշտություն է ծագում քննադատաբար մոտենալ գրականությանը, ստուգել նրա հարազատությունը հենց կյանքի որբնակրով: Այստեղից ել բղխում ե մեր վերաբերմունքը դեպի անցյալի գրականությունը, վորը գնահատելի յէ մեզ համար՝ այդ անցյալի բազմապիսի կողմերը հարազատությամբ մեզ ցույց տալու համար, բայց վորը պահանջում է զեպի ինքը քննադատական վերաբերմունք, չնարհիվ անցյալի գրող-ների սահմանափակության և դասակարգային շահերի:

Յերկերի վերլուծությունը՝ կոնկրետ հյութի վրա, աշակերտներին տամնում ե այդ յեզրակացություններին և հիմք ե ստեղծում հետագա ինքնուրույն ընթերցանության համար։

Հանձնարարում ենք աշխատանքի հետեւյալ մեթոդը:
Ուսուցիչը փոքրիկ ներածական զրույցի մեջ հայտ-
նում է ուսանողներին այն տեղեկությունները, վորոնք
անհրաժեշտ են նրանց յերկը (պատմվածքը) հասկանալու
համար։ Ապա ուսուցիչը, հնարավորության չափ ավելի
արտահայտիչ կերպով կարգում է յերկը, կանգ առնելով
յեթե հարկավոր է, հետնունետը համառոտ նկատողու-
թյունների համար (բացատրելու անհասկանալին): Բնիթեր-
ցումից հետո տեղի յե ունենում ծավալուն զրույց ուսուց-

ეჯტ სამართლად მოთხოვთ ულანით (თხი բაჟარებას კან გთიცა ემოსიანებულ ათანადწენ ეხებერები ქერავებების): შალოდ ყროვე-
ები ჩანარავითმარც, თასით უგებელი უქოთხი ყოფილ ეხებერები უარი ეხებერების გასამართლებელი აღას ეხებერები ჩამარც მათგებელი ბესა-
ებერავითმარც:

Σ Ρ Ο Φ Ι Λ

ԹՎԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ Դ-ՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՅՈՒՅՄՈՒՆՔՆԵՐ

Կիսազրագետների դպրոցը պիտի տա սիստեմատիկ գիտելիքներ և ունակություններ թվաբանությունից և տարրական տեղեկություններ՝ յերկրաշափությունից։ Դրաց դպրոցը պիտի սովորեցնի աշակերտներին գիտակցաբար կիրառելու դորձնականում ձեռք բերած գիտելիքներն ու ունակությունները արտադրության և հասարակա—քաղաքական աշխատանքների մեջ։

Թվաբանական պարապմունքների ժամանակ պիտի պահպանված լինի վորոշ սիմոեմ և խիստ հետևողականություն ծրագրի նյութի մշակման մեջ։ Հետևյալ ունակության մշակմանը պիտի անցնել միայն այն ժամանակ, յերբ նախընթացը հաստատապես և զիտակցաբար յուրացված կլինի։

Թվաբանությունն ուսումնական պլանում և պարապ-
մունքների գասացուցակում պիտի տեղ գրավի, վորպես
ինքնուրույն ուսումնական առարկա:

Թվաբանության պարագմունքների ժամանակ պիտի
ողավել այնպիսի մեթոդներից և աշխատանքի այնպիսի
ձևերից, փորձնք իրենց մեջ պարունակում են իրենց մեջ
ակախիվության, աշակերտաների ինքնագործունեյության ելե-
մենտներ, փորձնք տեղ են տալիս աշակերտաների ինքնու-
րույն աշխատանքներին և ոգնում են նրանց գիտակցաբար
և հաստատապես յուրացնելու առաջարկվելիք
Այսութը:

Նյութի մշակման ժամանակ համեմելիք բոլոր յեզրակացությունները պիտի կատարվեն աշակերտների կողմէց՝ ուսուցչի ղեկավարության տակ մի շաբթ զլսի գցող հարցերից հետո արդած զիտողությունների ժիման վրա (հարցերը

տալիս ե ուսուցիչը ինդիբների և որինակների լուծումների ժամանակ): Կանգ առնենք տամնորդական կոտորակը տամնորդական կոտորակով բազմապատկելու յերկու որինակների վրա: Առաջին որինակը—ուսուցիչը սահմանափակվում ե բացատրելով աշակերտներին, թե վորտեղ պիտի դրվի սարցակետը արտադրյալի մեջ՝ բազմապատկումը կատարելուց հետո և առաջարկում ե աշակերտներին մշտապես առաջնորդվել այդ կանոնով: Նյութի այդպիսի մշակման դեպքում աշակերտները կարող են միայն պասսիվորեն ընդունել և մերենաբար յուրացնել պատրաստի կանոնը:

Յերկրորդ ձեր.—ուսուցիչը նյութի մշակումը սկսում ե այստեղից, թե ինչ կախման մեջ ե գտնվում արտադրյալը բազմապատկելիի և բազմապատկիչը բազմապատիկ թվով մեծացնելուց: Մի շարք նպատակահարմարորեն ընտրած որինակներ լուծելով՝ աշակերտների միաքը դեպի նպատակը ուղղող հարցերի ողնությամբ, աշակերտները գալիս են պարզ յեղակացության, թե վորքան անդամ կմեծանա արտադրյալը, յերբ միաժամանակ մեծանում են բազմապատկելին ու բազմապատկիչը մի վորեւ բազմապատիկ թվով: Այդպիսի մշակումն այն հետևանքը կունենա, վոր աշակերտի համար պարզ կլինի, թե ինչու յերկնից տամնորդականով բազմապատկելիի և յեռանից տառնորդականով բազմապատկիչի արտադրյալում ստորակետով բաժանվում են հիմք տամնորդական թվանշաններ: Նյութի այս տեսակ մշակման դեպքում առաջ կդա ակտիվ և գիտակցական յուրացումն: Դասավանդությունը պիտի հիմնված լինի բացառապես հասկացողության, փորձի և դիտողությունների վրա: Դասավանդությունը պիտի լինի կոնկրետ, ակնառու: Ամեն մի նոր թեսմայի ուսումնառությունը պիտի սկսվի կոնկրետ խնդրից և առանձին դեպքերում միայն կարելի յե սկսել վերացական թվային որինակների լուծումից:

Մի շարք այդպիսի ինդիբներ ու որինակներ լուծելու հիման վրա յել պիտի յեղակացությունների դան աշակերտները:

Դասատուն պիտի հիմնավորապես, հաջորդականությամբ և սիստեմատիկ կերպով պարզի յուրաքանչյուր մշակելիք նյութի հիմնական հարցերը, պարզաբանի թե

մայիս տիպային ինդիբներն ու վարժությունները և տահաշվելու ու դրանցման ձևերը: Նյութի գիտակցական յուրացման հիման վրա պիտի անդիր արվեն՝ անհրաժեշտ աղյուսակները, կանոնները, առանձին գործողություններ կատարելու ձևերը:

Նյութի գիտակցական յուրացումը կոգնի հիշողության մեջ պահելու անհրաժեշտ յեղակացություններն ու կանոնները: Այդպիսի պայմաններում միայն հնարավոր ե յեղակացությունների անսխալ կիրառումն գործնական ինդիբների լուծման համար:

Այն բոլորը ինչ վոր ասացինք վերը, անհրաժեշտ ե ինկատի ունենալը թե թվաբանության դասընթացքն անցնելիս և թե յերկրաչափական նյութի մշակման ժամանակ:

Ծրագիրը չի նախատեսում յերկրաչափության լրիվ սիստեմատիկ գասընթացքի ուսումնասիրությունը: Յերկրաչափական նյութի մշակումը պիտի սահմանափակվի տարրական յերկրաչափական հասկացողությունների, գծերի և անկյունների չափելու յեղանակների, մակերևույթների և ծավանների հաշվելու կատարելու ծանոթությամբ միայն:

Վորպեսզի աշակերտների գիտակցության մեջ ստեղծել հարկավոր յերկրաչափական պատկերներն ու հասկացողությունները, հարկավոր ե յերկրաչափական նյութերի բոլոր մշակումներն ել անցկացնել գործնական ուղղություն դեպքում զիսավոր յերը կատարելու յեն գծագիրները, մողեները, գիտողությունները և փարձը: Յերկրաչափության նյութի մշակումը պիտի փոխադարձ կապով կապված լինի թվաբանության նյութի հետ: Յերկրաչափությունից պիտի իրական նյութեր վերցնել ինդիբներ կազմելու համար:

Յուրաքանչյուր առանձին պարապմունք պիտի մի վարտիված ամբողջություն հանդիսանա: Նա նվիրված պիտի լինի վորեւ մեկ վորոշ ունակության մշակմանը: Բայց այդ պարտիված ամբողջությունը միենույն ժամանակ պիտի սերտ կապի մեջ գտնվի անցած նյութի հետ: Անհրաժեշտ ե աշխատել կապ սահմանելու նոր հայտնելիքի մեջ այն նի հետ, վոր արդեն ունեն աշակերտները: Թվաբանական գործողությունների մեջ ունակություն-

ներն ամենալավ կերպով ձեռք են բերվում նպատակահարմարութեն—ընտրած թվային որինակների վարժությունների միջոցով։ Բայց վերացական թվային որինակների վրա հաշվներ կատարելու յուրաքանչյուր աշխատանքի ժամանակ, հարկավոր ե հիշել, վոր այդ տեսակի աշխատանքը միջոց ե միայն; իսկ նպատակը զբաղված ե թվաբանությամբ՝ ավելացնել ձեռք բերած գիտելիքները և ստացած ունակությունները խնդիրների լուծման վրա։

Այդ պատճառով ել ուսումնական ժամանակի գլխավոր մասը հատկացրած պիտի լինի խնդիրների լուծմանը։ Մեծ նշանակություն պիտի տալ նախորոք տված առաջարանքների համաձայն՝ աշակերտների կողմից հավաքած նյութերի հիմն վրա՝ ինքնուրույն խնդիրների կազմությանը։ Ընդհանուր աշխատանքների պլանի մեջ պիտի մանի հատուկ առաջարրություն։—աշակերտների, նրանց ամենորյա աշխատանքի տարբեր ընագավառներից վերցրած խնդիրներ կազմելը, և նրանց ինքնուրույն կերպով լուծելը՝ ուսուցչի ղեկավարության տակ։ Գրավոր հաշվիների հետ զուգընթաց աշակերտները պիտի կատարեն դպրում նաև բանավոր հաշվիներ։ Բանավոր հաշվը պիտի տարրի դաշնթացքի սկզբության ամբողջ ընթացքում՝ ինչպես ամբողջ և կոտրակային թվերի, այնպես ել տոկոսային հաշվիների մշակման հետ միասին։ Բանավոր կերպով լուծվելու յեն փոչ միայն թվային որինակներ, այլ և վորոշ պայմանով խնդիրներ։

Պարագմունքների հենց առաջին որերից, հարկավոր ե, վորպես կանոն, մտցնել աշակերտների կողմից իրենց կատարած աշխատանքների ստուգումն։ Կատարած հաշվիների ստուգումն ուրիշ գործողությունների ողնությամբ աշակերտների մեջ ստեղծում է հավատ գեղի իրենց ուժերը, վորնամանավանդ անհրաժեշտ ե ինքնուրույն պարագմունքների ժամանակ։

Իլրումն թվաբանության պարագմունքներին դպրոցում անհրաժեշտ ե աշակերտների մշտական համաշափ աշխատանքը նաև տանը։ Աշակերտների տնային աշխատանքի նպատակն ե՝—կրկնել դպրոցում մշակածը, ամրապնդել վարժությունների միջոցով ձեռք բերած ունակությունները, և վոր գլխավորն ե՝ ավելացնել կենսական խնդիրը։

Ների լուծման աշխատանքներին ձեռք բերած ունակությունները։ Տնային աշխատանքների համար նյութերի ընտրության մեջ պիտի պահպանվի անհատական մոտեցում գեղի ամեն մի առանձին աշակերտ։ Դասաւումն պիտի ստուգի աշակերտների բոլոր աշխատանքները։ Հակառակ մատուցի աշակերտները կմնան առանց ուղղվեալ պարագայում ունեցած սխալները կմնան առանց ուղղվեալ աշակերտները կընաելանան գործողությունների լու և աշակերտները կընաելանան գործողությունների սխալ կատարմանը։ Թվաբանության ամբողջ դասընթացքի մշակման համար, ըստ ուսումնական պլանի, հատկացրած մշակման 124 ժամ։ Ուսումնական նյութի ավելի հարմար պլանավորման համար, նմանապես և համարվացումը (կոմպեկտավորմը) հեշտացնելու նպատակով, դպրոցի ամբողջ ներկացումը հեշտացնելու նպատակով, դպրոցի ամբողջ ներկացումը բաժանված է յերկու առանձին շբանների, ըստ ծրագիրը բաժանված է յերկու առանձին շբանների, ըստ վորով ամեն մի շբանը ընդգրկում է թվաբանական թեմաների վորոշ սահման՝ ծրագրի մշակման կարգով։

Ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ամեն մի դասաւու պարագմունքների սկզբնաշրջանում՝ խմբի հետ ծանոթանալուց հետո, պիտի կազմի աշխատանքի արտադրական պլանը մեկ շրջանի համար։ Համապատասխան դպրոցի ընդհանուր ուսումնական պլանի՝ աշխատանքի արդարական պլանի մեջ պիտի ցույց արվի, թե վոր որերին մշակության պիտի յենթարկի ծրագրի յուրաքանչյուր թեման։ Պլանը չպիտի իջեցնի ծրագրի ծավալը և չպիտի խանգարի նրա սխատեմը։ Պլանավորման ժամանակ պիտի խանգարի նրա սխատեմը։ Պլանավորման ժամանակի վորոշված մերի քանակը և այն մոտավորապես ժամանակի վորոշված չափը, վորը ցույց է արված ծրագրում։

Աշակերտների հառաջադիմության հաշվառումն ուսուցչի կողմից մշտագետ պիտի տարրի ուսումնական աշխատանքի ընթերցաքում (ստուգիչ աշխատանքների, առաջարրությունների կատարման ուսուցչի հարցերի պատասխանների և այլն միջոցով)։ Ամեն մի աշակերտ պիտի խանգարի նաև տվյալ թեման, թե վոչ։

ԾՐԱԳԻՐԸ (ԾՐԱԳԻՐԻ ԾԱՎԱԼԸ 124 ԺԱՄ)։

Կրկնություն։—ամբողջ թվերի համարակարգը։ Հորս գործողությունները ուղած մեծության ամբողջ թվերով։

մետրական չափեր՝ յերկարության, ծանրության և հեղուկ մարմինների:

Հասարակ կոտորակների կարգալը և դրելը: Հասարակ կոտորակի արտաքին տեսքի փոփոխությունը՝ նրա համար չի և հայտարարի փոփոխության դեպքում: Հասարակ կոտորակների գումարումն ու հանումը: Տասնորդական կոտորակների համարագրումը: Տասնորդական կոտորակի գլխավոր հատկությունները: Տասնորդական կոտորակների չորս գործողությունները: Թվաբանական միջին, Հարաբերական բաժանում: Տոկոսները հաշվելու յերեք տեսակ ձևը:

Դիտագրական համար և գրափեկներ:

Մակերեսութիւն մետրական չափերը: Մակերեսութիւն և կողմերի գումարի հաշվելը: ուղղանկյունու, քառակուսու, յեռանկյունու և բազմանկյունու: Ծավալի մետրական չափերը: Ուղղանկյուն գուգաճեռակողմի և խորանարդի մակերեսութիւն և ծավալի չափը:

ԾՐԱԳԻՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՄՇԱԿՄԱՆ ՀԱԶՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին շրջան (մոտավորապես 66 ժամ):

1. Ամբողջ թվերի համարակարգը մինչև ներառյալ մեկ միլիոն: Դասեր և կարգեր: Թվանշանի նշանակությունը ըստ տեղերի: Զերոյի նշանակությունը թվանշաններով թվեր գրելու ժամանակ:

Ամբողջ թվերի կորացնելը մինչև լրիվ դասերը և դասի առանձին կարգերը (ավելցուկներով և պակասորդներով):

Ամբողջ թվերի բազմապատկումը՝ բանավոր և գրավոր: Բաժանումը:

Գծեր՝ ուղիղ, կոր և կոտրաված: Ուղիղ գծի մասը: Մասերի կառուցումը և չափելը: Յերկարության մետրական չափեր՝ 1 կմ, 1 մ, 1 սմ, 1 մմ. Ուղղանկյուն և քառակուսի: Ուղիղ անկյուն: Ուղիղ անկյան գծագրությունը անկյունաչափով: Ուղղանկյան և քառակուսու կառուցումը ըստ տվյալ չափերի: Ուղղանկյան և քառակուսու մակերեսութիւն չափելը: Մակերեսութիւն մետրական չափեր՝ 1 կմ²

և հեկտար. 1 ար. 1 մ.² 1 դմ.² 1 սմ.² 1 մմ.² Ուղղանկյան և քառակուսու մակերեսութիւն չափելը ու հաշվելը: Ամբողջ թվերի բաժանումը՝ բանավոր և գրավոր:

Դիտարամների ընթերցումն ու կառուցումը. — գծային և սյունաձև: Մասշտաբը: Ամենապարզ գրաֆիկների (գծադիրների) ընթերցումն ու կառուցումը. (20 ժամ):

2. Հասկացողություն բաժինների մասին: Հասարակ կոտորակների ընթերցումն ու գրելը:

Տասնորդական կոտորակների թվակարգը մինչև վեց տասնորդական նշաններով թվերը: Տասնորդական կոտորակների համարիչն ու հայտարարը: Թվանշանների նշանակությունը թվերի մեջ ըստ տեղերի: Տասնորդական կոտորակի գլխավոր հատկությունները. — կոտորակի մեծության անփոփոխ մեալը՝ կոտորակի վերջում զերո ավելացնելու կամ չնշելու դեպքում, կոտորակի մեծության փոփոխումը ստորակետը դեպի ձախ կամ դեպի աջ փոխադրելու դեպքում: Միանուն մետրական չափերի փոխարինումը այլանուն չափերով:

4. Տասնորդական նշանների միաաեսակ և տարբեր թվերով տասնորդական կոտորակների գումարումն ու հանումը (3 ժամ):

5. Տասնորդական կոտորակի բազմապատկումը ամբողջ թվով: Արտադրյալի փոփոխումը բազմապատկելիի բազմապատկելի փոփոխության դեպքում: Բազմապատկման դեպքեր՝ յերբ արտադրյալի վերջում ստացվում են զերոներ: Ամբողջի մասերի գտնելը: Արտադրյալի փոփոխումը բազմապատկելիի և բազմապատկելիի բազմապատկելի փոփոխության դեպքում: Տասնորդական կոտորակի բազմապատկումը տասնորդական կոտորակով:

Ամբողջ թվի բազմապատկումը տասնորդական կոտորակով: Արտադրյալի փոփոխումը բազմապատկելիի բազմապատկելի փոփոխության դեպքում: Փոփոխման դեպքեր՝ յերբ բազմապատկելիի ավելի ցածր կարգերի փոխարեն ունի զերոներ: Ամբողջի մասերի գտնելը: Արտադրյալի փոփոխումը բազմապատկելիի և բազմապատկելիի բազմապատկելի փոփոխության դեպքում: Տասնորդական կոտորակի բազմապատկումը տասնորդական կոտորակով:

Արտադրյալի կորացումը (10 ժամ):

6. Տասնորդական կոտորակների բաժանումը: Տասնորդական կոտորակի բաժանումն ամբողջի վրա: Վորոշ ճշությամբ մոտավոր քանորդը՝ թանորդը՝ ավելցուկով, քանորդ

դը՝ սլակասորդով։ Ամբողջի բաժանումը ամբողջի վրա մինչև վորոշ տասնորդական նշանի ճշտության։ Հասարակ կոսորտակի վերածումը տասնորդականի։ Ամբողջ թվի և տասնորդական կոսորտակի բաժանումը տասնորդական կոսորտակի վրա։ Ամբողջի գտնելը՝ նրա մասերի ողնությամբ (20 ժամ)։

ՅԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ (ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ 58 ԺԱՄ):

1. Կրկնություն (7 ժամ):
 2. Հասկացողություն տոկոսի մասին: Թվից մեկ կամ մի քանիփ տոկոսներ գուրք բերելը (6 ժամ):
 3. Գտնել թիվը՝ նրա ավյալ տոկոսի վրա (7 ժամ):
 4. Մեկ թվի տոկոսով արտահայտելը մյուս թվից (տոկոսային հարաբերության գտնելը): (8 ժամ):
 5. Խեղիքների լուծումը ամեն տեսակի տոկոսային հաշվին կուով (8 ժամ):
 6. Զուգահեռական և ուղղահայաց գծեր: Ուղղանկյան և քառակուսու կողմերի գումարի հաշվելը: Հատակադիմացարք (4 ժամ):
 7. Ուղղանկյուն զուգահեռակողմի: Ուղղանկյուն զուգահեռակողմի չափելը: Հորիզոնական և ուղղահայաց ուղղություններ: Խորանարդ: Զուգահեռակողմերի և խորանարդի յերեսներն ու կողմերը: Խորանարդի չափերը: Ուղղանկյուն զուգահեռակողմի և խորանարդի ծավալի չափելը և հաշվելը:
 8. Յեռանկան չափերը՝ 1 մ.³ 1 դմ.³ 1սմ.³ 1 մմ.³ Տարբեր խորանարդ չափերի միջև յեղած փոխհարաբերությունը:
 9. Յեռանկյունի: Անկյունների տեսակները.—ուղիղ, սուր և բութ: Յեռանկյունների տեսակները՝ ուղղանկյուն, թեքանկյուն: Յեռանկյունու հիմքը և բարձրությունը: Յեռանկյան մակերեսի հաշվելը: Բաղմանկյունները: Ամեն տեսակի բաղմանկյունների մակերեսի հաշվելը՝ նրանց յեռանկյունների բաժանելու յեղանակով (6 ժամ):
 10. Անցածի կրկնություն (6 ժամ):

Digitized by srujanika@gmail.com

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԻՍԱԳՐԱԳԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ,

Բնագիտությունը կիսագրագետների գործոցում աշակեր-
տներին պիտի տա բնության հիմնական վաստերի և յե-
րկույթների զրաելիքները, բացի բնության դարգացման
հիմնական որինաչափությունները և տանի նրանց գեղի
բնության ճշմարիտ, գիտելեկտիկա—մատերիալիստական
հասկացողությունը։ Միևնույն ժամանակ բնագիտությունը
կիսագրագետների գործոցում աշակերտներին պիտի տա
արտադրության գիտական հիմունքների գիտելիքները,
գլխավորապես գյուղատնտեռական արտադրության, տանի
նրանց գեղի այն բանի հասկացողությունը, թե ինչպես
մենք բնությունը ճանաչելու հիման վրա տիրապետում
ենք նրան մեր սոցիալիստական շինարարության գործնա-
կանում։

Նյութի կոնկրետությունը բնագիտության աշխատանքի հաջողության անհրաժեշտ պայմանն է հանդիսանում։ Սահմաներով աշակերտաների հետ այս կամ այն որինաչափությունը բնության յերևույթների մեջ, միևնույն ժամանակ անհրաժեշտ է ցույց տալ նրանց, թե ինչպես ենք մենք ոգտագործում այդ որինաչափությունների գիտելիքները մեր արտադրական գործունեյության մեջ։ Դրա հետևանքով աշակերտաների ձեռք բերած գիտելիքները կունենան ավելի ներգործական ազգեցություն։

Բույսերի կենսաբանության մշակումը պիտի լեցուն լինի մի շարք պարզ և հետաքրքիր փորձերով:

Յայտ փորձերից շատերը կարող են դրված լինել ամեն
մի մասսայական դաշտում ել Դաստիառն պիտի հսգա այն
մասին, վորպեազի իր ժամանակին հավաքի շրջապատի ընու-
թյան մեջ դրա համար անհրաժեշտ որ եկաները (հողի նմուշ-
ներ, զանազան տեսակի սերմեր, զանազան տեսակի հետա-
քրքիր բույսեր և այլն):

Բույսերի կենսանաբանության մշակման ժամանակ հատուկ ուշադրություն պիտի դարձնել այն յեղակացություն-

ների վրա, վորոնք նշանակություն ունեն մեր սոցիալիստական բուսաբուծության գործնականի համար (պայքար ըերքատվության համար, պայքար յերաշտի դեմ): Նույնառավանդ մեծ նշանակություն ունի այդ գյուղական դպրոց ների համար, քանի վոր այդ գիտելիքները ամիջականորեն զինում են աշակերտներին ազրուելինիկային տիրապետելու համար:

Ե ճետեղություն բույսերի կենսաբանության բաժնի՝ արփում են հակակրոնական յեղակացություններ:

Այդ յեղակացությունների հիմնական գաղափարն այս եւ՝ ուսումնասիրելով բույսերի կյանքը, մենք ճանաչում ենք նրա որենքները և դրա հիմնա վրա յել ղեկավարում ենք բույսերի կյանքը մեր սոցիալիստական գյուղանախառության մեջ: Այսպիսով մեր սոցիալիստական շինարարության պրակտիկան մենք պիտի ոգտագործենք և վորպես հակակրոնական դաստիարակության ֆակտոր:

Կենդանիների կենսաբանության ուսումնասիրությունն ամենասերտ կապով կապված պիտի լինի կենդանաբուծության պրակտիկայի հետ: Ուսումնասիրելով, որինակի համար, այնպիսի հարցերը, ինչպիսին են կենդանիների կերպելը, բազմացնելը, անհրաժեշտ և պարզել աշակերտներին, թե ինչպես գիտության յեղակացումները կիրառվում են սոցալիստական կենդանաբուծության պրակտիկայում: Նամանավանդ կարեւոր նշանակություն ունի այդ գյուղական գպրոցների համար, քանի վոր այդ գիտելիքները զուտելիքների (կենդանաբուծության) գիտակցորեն տիրապետման անհրաժեշտ պայմանն են հանդիսանում:

Մարդու վերաբերյալ բաժինն սկսվում եւ մարդկային մարմնի մասին գիտության ծագման և զարգացման վերաբերյալ համառոտ պատմական տեղեկանքով: Բնագիտության դասավանդության մեջ գիտության պատմությունից ավյաներ մտցնելը հանդիսանում է առհասարակ խիստ ցանկալի՝ մեթոդոգիտական տեսակետից և հետաքրքիր մեթոդական տեսակետից, իսկ մարդու մարմնի մասին գիտության պատմությունից ավյաներ մտցնելը — և առավել քանի վոր այդ որինակների վրա կարելի յե ամենահամոզիչ կերպով ցույց — տալ, թե ինչպիսի գաման թշնամի յեն յեղել և մնում են կրոնն ու յեկեղեցին՝ գիտու-

թյան համար: Դա հարուստ նյութ է տալիս հակակրոնական դաստիարակության համար: Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան մշակվում են խիստ համառոտ կերպով, քանի վոր ամբողջ հիմնական նյութը մշակված է արդեն նաև ընթաց բաժանում „կենդանիների կենսաբանությունը“ վերնագրի տակ: Որպանների յուրաքանչյուր սիստեմի տեսության ժամանակ նշվում է նմանությունը մարդու մարմնի և կենդանիների մարմնի կառուցվածքի մեջ, մանավանդ կաթնասունների, և նրանց որգանների արտաթորումների մեջ: Մարդու անատոմիան և ֆիզիոլոգիան անցնելու ժամանակ անպատճառ նշվում են մարդու անատոմիա — Փիզիոլոգիական առանձնահատկությունները (ուղիղ ման գալը, զիսի ուղեղի չափազանց զարգացումը): Առանձին ուշագրություն է դարձվում մարդու՝ կենդանիներից տարբերվելու ամենազլիավոր հատկանիշների պարզաբանության վրա այն և աշխատանքը և գործիքներ շինելու հրմտությունը, հասարակական կենցաղով պայմանավորված գիտակցությունը:

Կենդանիների և մարդու անատոմիայի և ֆիզիոլոգիայի մշակված հարցերը տալիս են կոնկրետ նյութի այն մինիմումը, վորն անհրաժեշտ, ե վորպեսզի, զոնե ամենատարրական ձևով, պարզի մատերիալիստական, հակակրոնական աշխարհայցքի դաստիարակման համար հսկայական նշանակություն ունեցող՝ մարդու ծագման մասին հարցը:

Այդ հարցի ուսումնասիրության ժամանակ գիտության ուսմունքը հակադրվում է կրօնական „ուսմունքին“, այն հաշվով, վորպեսզի բացվի կրօնէ մարդու աստվածային ստեղծագործության քարոզների անկարելիությունն ու վնասը:

Այստեղ ապացույցներ են բերվում համեմատական անատոմիայից, և բրիոլոգիայից և պալեոնտոլոգիայից ապա պարզվում է աշխատանքի գերը վաղեմի մարդաման կապիկների մարդամալու պրոցեսում: Այդ հարցում մենք գտնվում ենք բիոլոգիական և սոցիալական սահմանում, վոր դասավանդման պրակտիկայում պիտի պարզորեն հասկանալ վորովնետե այդ անհրաժեշտ պայմանն ե հանդիսանում մեթոդոգիտապես ճշշտ լուսաբանալու մարդու ծագ-

ման մասին հարցը՝ Ներկա ծրագիրը մի ընդհանութը ծրագիր և հանդիսանում քաղաքի և գյուղի դպրոցների համար։ Բայց քաղաքային և գյուղական դպրոցները իրենց առանձնահատկություններն ունեն, և այդ հաշվի յե առնված ծրագրի մեջ։ Դվասավոր տարբերությունը նրանումն ե, վոր գյուղական դպրոցի ուսումնական տարբին ավելի կարճատե և, քան թե քաղաքայինը։ Դրան համապատասխան ծրագրի մշակումը պլանավորվում ե՝ քաղաքային դպրոցի համար 70 ժամով, գյուղականի համար 50 ժամով։ Ինարկե այդպիսի պայմաններում անհնար և առաջարկել ծրագիրը միևնույն ծավալով թե քաղաքի դպրոցների համար և թե գյուղի համար։

Ուսումնական աշխատանքի ուսցիոնալ կազմակերպման մեջ բացառապես մեծ նշանակություն ունի ուսուցչի նախապատրաստումը դասի համար։

Պլան կազմելու ժամանակ անհրաժեշտ և ոգաաործելու ունեցած մեթոդական և ուսումնական ձեռնարկները մանավանդ հատկապես կիսագրադեսների դպրոցների համար հրատարակածները։ Ծրագիրը կարող ելինել ավելի կամ պակաս կրծատ կամ մանրամասն, համաձայն դասառավի պահանջներին։ Այսպես, փորձառու դասառուն կարող ե սահմանափակվել և դասի համառոտ պահանով, իսկ նորակնակ դասառավի համար պահանջվում ե ավելի մանրամասն պլան։ Ծրագրի մեջ պիտի ցույց տրված լինեն. — 1) թեմայի անունը, 2) տվյալ թեմայի մշակման ժամկետը, 3) թեմայի հիմնական հարցերը, 4) մշակման մեթոդները (գրույցներ, աղյուսակների բացատրությունը, այսինչ փորձերի բացատրությունը, այս ինչ յեղակացությունների գրանցումը և այլն), 5) տվյալ թեմայի մշակման համար ուսումնական սարքավորումը։

Ամենահաճախ կիրառվող մեթոդներից մեկն ե հանդիսանում դասառավի պատմությունը, հաճախ գրույցի ելեմենտներով, կամ նոյնիով գրույցը, յեթե նյութը ավելի մոտ ծանոթ ե աշակերտներին։ Բայց սխալ կիրայի սահմանափակվել դասառավանդության այդպիսի բահավոր մեթոդներով։

Զարդարանց անհրաժեշտ և մատնել դասառավանդության պրակարիկայի մեջ դիտողականություն և ամենաապարդ

Հետազոտություն:

Զանազան գննական պիտույքների հետ միատեղ պիտի լայնորեն ոգտագործել ընական որեկաները։ Յեվ դա կախված է արդեն միմիայն դասառավի իրեն նախաձեռնությունից։ Մանավանդ լայնորեն ոգտագործել կարելի յե ընական որեկաները բույսերի կենսաբանության դասընթացքի մշակման ժամանակ։ Այսպես, սրինակ, բերված պուպունի կամ գեղնածաղկի կենդանի կամ չորացրած որինակները կարող են հրաշալի պիտույքների աեղ ծառայել արմատի կառուցվածքի ուսումնասիրության ժամանակ (գլխավոր և փնջած արմատներ) և այն։ Յեվ վորքան այդպիսի նյութեր կան մեր շուրջը։ Հարկավոր և միայն իւ ժամանակին հոգալ և հավաքել այն։

Մանավանդ մեծ նշանակություն ունի ընագիտության դասավանդության համար փորձը։ Ինարկե, գպրոցի պրակարիկայում, ամենից ավելի իրականալի յեն փորձերի ցուցադրումները, այսինքն փորձեր, վոր ցուցադրում և ուսուցիչը աշակերտներին։ Բայց բավականաչափ սարքավորված դպրոցի պայմաններում չափազանց ցանկալի յեն և փորձերը, կատարված իրենց՝ աշակերտների կողմից։ Ամեն մի փորձ կատարելուց առաջ, նախորոք անհրաժեշտ և պարզել աշակերտների համար այն հարցը, վորը յենթադրվում է լուծել տվյալ փորձի հիման վրա։

Այս կամ այն հարցի մշակման վերջում ինչպիսի մեթոդով ել վոր իրականացվի այն, անհրաժեշտ և ձեռկերպել յեղբակացությունները։ Ինկատի ունենալով, վոր աշակերտները գես և թույլ կերպով են տիրապետում դրանցման տեխնիկային, և վոր գրանցման համար շատ ժամանակ և պահանջվում, հարկավոր և զրի առնել միայն նրանցից ամենակարեղ յեղբակացությունները համառոտ, կերպով։ Այսպես՝ կոպտաբար հաշված, կարելի յե մի դասին զրել տալ վոչ ավելի, քան 10 տող։ Էստ վորում, ուսուցչին հանձնարարվում է նախորոք այդ յեղբակացությունները զրել գրատախտակի վրա։ Սակայն չի կարելի միանգամայն հրաժարվել զրանցումներից։

Յեղբակացությունների գրանցումը ամբագնդում և ամենակարեղ գիտելիքները և աշակերտներին վարժեցնում է կարգապահության։ Աշխատանքի այլ ձևերի հետ միասին,

դպրոցում կարող ե տեղի ունենալ նաև աշակերտաների ընթերցումը դասագրքից: Բայց դասագրքի ընթերցումը վոչ մի գեպքում չի կարող փոխարինել առարկայի բացատրությանը ուսուցչի կողմից, այդ պատճառով ել դասագրքի ընթերցումը հարկավոր ե կիրառել ուսուցչի բացատրություններից ճետո՛ մշակված նյութի ամրապնդման կարգով: Այդպիսով դասագրքի ընթերցումը դպրոցում նշանակալից չափով սահմանափակվում ե և փոխադրվում ե առավելապես անային աշխատանքի: Բնագիտության աշխատանքների մեջ փորոշ տեղ պիտի գրավեն եքսկուրսիաները դեպի բնություն, թանգարաններ և արտադրություն (Փաբրիկա, գործարան, կոլխոզ, սովխոզ):

Վորագիսի եքսկուրսիան ավելի մեծ արդյունքներ տա, ուսուցչին անհրաժեշտ ե նախապատրաստվել զրա համար: — Ենքը նախապես պիտի ծանոթանա եքսկուրսիայի տեղի ճետ, մշակի նրա պլանը, առաջադրություններ կազմի աշակերտաների առանձին խմբերի համար:

Ամեն մի եքսկուրսիա պիտի անցկացվի փորոշ թեմայի առթիվ: Եքսկուրսիայից ճետո պիտի անցկացնել մշակված մշակված թեմայի վերաբերյալ հանած յեղակացությունների հանրադումարը տվող զրույցներ:

ԾՐԱԳԻՐ — ԿՈՆՍՊԵԿՏ

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Զ Ր Ո Ւ Ի Ց Ց (1 Ժամ)

Բնագիտությունը կապիտալիստական յերկներում և Ա. Խ. Հ. Մ.—ում: Բնագիտությունը յենթարկված սոցիալիստական շինարարության շահերին:

Բնագիտության ուսումնասիրության նշանակությունը՝ բնությունը ուղիղ կերպով հասկանալու և տեխնիկային տիրապետելու համար:

Աշակերտների ծանոթացումը՝ պլանի և ուսումնական աշխատանքի կազմակերպման ճետ՝ բնագիտության դասի վերաբերյալ կիսագրագետների դպրոցներում:

I. ՖԻԶԻԿԱՅԻ ՅԵՎ ՔԻՄԻԱՅԻ ՆԱԽԱՀԻՄՔԵՐԸ:

(ՔԱՂԱՔԻ ԴՊՐՈՑՈՒՄ — 20 ԺԱՄ, ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑՈՒՄ — 14 ԺԱՄ)

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Զ Ր Ո Ւ Ի Ց Ց կ ո վ ո խ ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ը:

(Քաղաքի դպրոցում — 9 Ժամ, գյուղի դպրոցում — 6 Ժամ): Գաղափար մարմնի և նյութի մասին: Գաղափար պինդ, հեղուկային և գաղանման մարմինների մասին: Մարմինների առքությունից լայնանալը և ցրտությունից սղմվելու Փորձեր՝ դրամի, ներկած ջրի և ողի վրա: Որինակներ տեխնիկայից: — յերկաթուղագծերի փորմածքը (սելսերի շարելը), անիվի վրա յերկաթե սղակ անցկացնելու և այլն: Ջրի տարրությունից լայնանալու առանձնահատկությունը — սառցանալու ժամանակ լայնանալը: Ջուրը սառցնելու փորձը փակ շեշտի մեջ: Որինակներ տեխնիկայից: — ջրմուղի խողովակների տրավիելը, սաղիսատրների տրավիելը ավտոմոբիլի մեջ, տրակալորների մեջ և այլն, նրանց մեջ ջուրը սառցանալու ժամանակ: Նյութի մի զրությունից մի այլ դրության փոխանցումը (ջրի որինակի վրա): Գաղափար շերմաստիճանի և ջերմաչափի մասին:

Ջերմաստիճանի չափման վարժություններ:

Գաղափար գոլորշու ձնշման և նրա տեխնիկայի մեջ ուղարկութման մասին: Գոլորշու ձնշումը ցուցագրող փորձ: Գաղափար մանումեարի (խտաչափի) մասին: Գաղափար մինուրտային ձնման մասին: Մինուրտային ձնշումն ցուցագրող փորձեր: Գաղափար ծանրաչափի մասին:

Գաղափար նյութի մոլեկուլային կառուցվածքի մասին: Ինչով են բացատրվում նյութի ջերմային փոփոխությունները: Ջերմությունը նյութեղեն չե, այլ նյութի մուկուլների շարժման չափ ե:

2. ՆՅՈՒԹԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Քաղաքի դպրոցում՝ 7 Ժամ, գյուղի դպրոցում՝ 5 Ժամ):

Գաղափար նյութերի ֆիզիքական և քիմիական փոփոխությունների մասին: Գաղափար վոչ միատարր և միատարր նյութերի մասին:

Գաղափար քիմիական բեակցիաների մասին, վորագես փոփոխությունների, վորանց ժամանակ փոփոխվում և

Նյութի կազմը: Միացման բեակցիան ծծմբաթթվուտային յերկաթ ստանալու որինակի վրա: Տարրալուծման բեակցիա: Սնդիկի թթվուտի տարրալուծման փորձ՝ տաքացնելու ժամանակ: Քիմիական բեակցիաների որինակներ բնության մեջ և տեխնիկայում: Գաղափար պարզ և բարդ նյութերի մասին (այս նյութերի որինակների վրա, վորոնց հետ ծանոթացել են նախլնթաց փորձերի ժամանակ):

Ո Դ: Փորձ, փորը ցույց ե տալիս թթվածնի (ծավալի 1/5 մասը) և բորակածնի ($\frac{4}{5}$ մասը) ներկայությունը ողի մեջ: Թթվածնին, նրա հատկությունները, նշանակությունը բնության մեջ և ոգտագործումը տեխնիկայում (ավտոգն զողում) և բժշկականության մնչ: Թթվածնին ստանալու փորձ (բերատեայան աղը մարդանեցի յերկթթվուտի հետ) և նրա հատկությունների հետազոտությունը (աջակցում և այրմանը): Բորակածնին, նրա հատկությունները, նշանակությունը բնության մեջ և ոգտագործումը տեխնիկայում (պարարտանյութեր և պայթուցիկ նյութեր պատրաստելը):

Բորակածնին ստանալու փորձ՝ սելիտրայից, նրան յերկաթի թեփի հետ տաքացնելով և նրա հատկությունների հետազոտությունը (չի աջակցում այրմանը):

Ածխաթթու գագ, նրա հատկությունները, նշանակությունը բնության մեջ և ոգտագործումը տեխնիկայում (հրաշեջ գործիքներ): Ածխաթթու գագ ստանալու փորձ՝ մարմարինի կամ կավճի վրա աղի թթվուտով ներգործելով և նրա հատկությունների հետազոտությունը (չի աջակցում այրմանը, պղտորում և կրածուրը):

Զ ու ր: Բնածնին ջուրը և նրա պղտորությունից ու մեջը լուծված նյութերից մաքրելու միջոցները: Փորձեր.— զտումը և թորումը, զաված և թորված ջրի հատկությունների հետազոտությունը: Զուրը մաքրելու տարրեր միջոցների կիրառումը տեխնիկայում (զտումը ջրմղակայաններում և թորումը զեղորայքի համար): Ջրի մեջ լուծված նյութերի հեռացնելը ջրի միջից: Աղի լուծվածքի գոլորշիացման փորձ: Գոլորշիացման կիրառումը տեխնիկայում (աղ ստանալը):

Ջրի կազմը:— ջուրը՝ ջրածնի և թթվածնի միացում: Ջրածնին և նրա հատկությունները: Ջրածնի ոգտագործումը տեխնիկայում (դիրիժարլաշինության մեջ և այլն):

Ջրածն ստանալու փորձ՝ խառնված ծծմբաթթվուտի վրա ցինկի ներգործությամբ և նրա հատկությունների հետազոտությունը (այրվում է). Չուր ստանալը ջրածնի այրումից:

3. ՆՅՈՒԹԻ ՅԵՎ ԵՆԵՐԳԻԱՅԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ:

(Քաղաքի դպրոցում՝ 4 ժամ, դյուդի՝ 3 ժամ):

Քաղաքաբար՝ նյութի պահպանության մասին շրջապատկից վերցրած կոնկրետ որինակների վրա: Փորձ, փորը ցույց ե տալիս, թե այրվող նյութը (որինակ սպիրտը) չի անհետանում, այլ փոխարկվում և այլ նյութերի: Գաղափար՝ մեքենական եներգիայի մասին՝ շարժվող ջրի և քամու եներգիայի որինակների վրա: Գաղափար՝ եներգիայի այլ տեսակների մասին և եներգիայի փոխանցումը մի անսակլից մի այլ տեսակին (ամենապազ որինակների վրա՝ տեխնիկայից): Գաղափար՝ եներգիայի փոխարկման և պահպանության որենքի մասին: Նյութի և եներգիայի պահպանության որենքի մասին նշանակությունը արտադրական գործունեյության մեջ: Մեր նվաճումներն ու խնդիրները Ս. Խ. Հ. Մ. ելեքտրիֆիկացիայի բնագավառում:

II. ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՄՔԵՐԸ

(Քաղաքի դպրոցում՝ 19 ժամ, դյուդի՝ 15 ժամ)

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Զ Ր Ո Ւ Յ Ց Ց

(Քաղաքի դպրոցում՝ 1 ժամ, դյուդի՝ 30 բոպե):

Բույսերի կենսաբանությունը—գա բույսերի կառուցվածքի և կյանքի մասին գիտությունն ե: Բույսերի կենսաբանությունը՝ վորպես բուսաբուծության գիտական հիմքը: Մեր ամենանշանավոր կուլտուրական բույսերը,— հացահատիկային, տեխնիկական և այլն: Գաղափար՝ կուլտուրական մշակութների ծագման մասին: Սոցիալիստական բուսաբուծության խնդիրները յերկրորդ հնդամյակում: Բույսերի կենսաբանության գերը՝ բերքի համար պայքարում:

Բույսերի կենսաբանության ուսումնասիրության նշանակությունը՝ բնությունը ճշտորեն հասկանալու և աղբուհեինիկային տիրապետելու համար:

1. ԲՈՒՅՍԸ ԿԵՆԴԱՆԻ ՈՐԳԱՆԻՉՄ Ե:

(Քաղաքի գոլոցում՝ 3 ժամ, զյուղի՝ 2 ժամ):

Բույսի կառուցվածքը.—բույսի որդանները (արմատ, տերե, ցողուն, ծաղկ), նրանց նշանակությունը:

Բույսի բջիջային կառուցվածքը.—զաղափար՝ բուսական բջիջի մասին, նրա կառուցվածքի և բաղմացման մասին: Յուցալը ու մասին:—պամիդորի միջուկի բջիջները և սոխի բլթակի բջիջները միկրոսկոպի տակ:

Գաղափար՝ բույսերի քիմիական կազմի մասին:—ջուր, որդանական նյութեր, մոխիր: Ամենապլիսավոր որդանական նյութերը:—սպիտակուցներ, ճարպեր, ուլա, շաքար, բջջանյութ: Փորձեր:—1) ալյուրից սոսնձանյութ (շրեշ) սոտանալը, 2) ուլա պարունակող սերմերի մեջ ուլայի յերեան հանելը, 3) քաղցր պառուզների մեջ շաքարի յերեան հանելը, 4) ճարպատ սերմերի մեջ ճարպի յերեան հանելը: Գաղափար՝ բույսերի մեջ կատարվող կենսական պրոցեսների մասին:—մնաղառություն, չնչառություն, աճում, բաղմացում:

Յեղրակացություն:—Բույսերի հիմնական տարրերություններ՝ վորպես կենդանի որդանիդմների, անկենդան բնության մարմիններից:

2. ՍԵՐՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՃՈՒՄԸ (2 ԺԱՄ):

Սերմի կառուցվածքը.—սաղմ, մնաղառու պաշարանյութերի տարրալուծումները: Սերմերի աճման համար անհրաժեշտ պայմանները:—ջուր, ուլ, ջերմություն: Գաղափար՝ ծլունակության մասին: Սերմների ծլունակությունը վորոշելու փորձեր: Ծլի զարգացումը:

Ծլի մնաղառությունը սերմի պաշարանյութերի հաշվին: Ծլուղ սերմերի չնչառությունը: Փորձի զրվածքը: Ինչպիսի սերմեր պիտի ցաներ, վորպեսզի լավ բերք ստացվի: Գաղափար՝ գարնանացանի և աշնանացանի մասին:

3. ԲՈՒՅՍԸ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՂԻՑ (2 ԺԱՄ)

Միարլթակ և յերկրլթակ բույսերի արմատների կառուցվածքը: Նմուշների ցուցադրում: Արմատամազիկները վորպես բույսի հողից մնունդ ստանալու որդաններ: Ցորե-

նի ծլերի արմատների վրայի արմատամազիկների ցուցադրումը: Հողի կազմը՝ վտահող, ավաղ, կափ, աղեր: Ինչ և ստանումը բույսը հողից արմատամազիկներով: Լորիանման բույսերի առանձնի յուրացումը: Լորիանման բույսերի արմատների վրայի ուսուցքների ցուցադրումը: Լորիանման բյուսերի նշանակությունը ցանքաշրջանում:

Բույսի հողից մնունդ ստանալու ուսմունքը՝ վորպես պարաբուցման պրակտիկայի վիտական հիմքը: Գյուղատնտեսության քիմիացման խնդիրները յերկրորդ հնգամյակում:

4. ԲՈՒՅՍԸ ՍՆՆԴԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՈՂԻՑ (3 ԺԱՄ)

Ածխաթթու գազի գործածությունը բույսի կողմից՝ մթնոլորտից: Տերևի կառուցվածքը: Քլորֆիլի հատիկները տերևի միջուկի բջիջներում: Տերևի ցուցադրումը միկրոսկոպի տակ: Ածխաթթու գազի տարրալուծումը կանաչ բույսի մեջ լույսի տակ և թթվածնի արտահնչումը: Այդ յերեւյթի ցուցադրումը՝ վորձով: Ուլայի տուածանալը կանաչ բույսի մեջ ածխաթթու գազի և ջրի ելեմենտներից: Այդ յերեւյթի ցուցադրումը՝ վորձով: Գաղափար՝ վոչ կանաչ բույսերի մնաղառության մասին:

Յեղրակացություններ:—Որդանական նյութերի առաջնական նանքային նյութերից՝ վորպես կանաչ բույսերի առանձնահատկությունները: Բուսաբուծությունը՝ վորպես ստեղծագործող արդյունաբերություն:

5. ՆՅՈՒԹԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ ԲՈՒՅՍԵՐԻ ՄԵՋ:

(Քաղաքի գոլոցում՝ 2 ժամ, զյուղի՝ 1 ժամ)

Յողունի կառուցվածքը:—կեղե, փառ, փայտանյութ և միջուկ (փայտի սիրու):

Որդանական նյութերի շարժումը տերևներից գեպի արմատները: Ջրի և նանքային նյութերի շարժումը բույսերի մեջ արմատներից գեպի տերևները:

Ջրի գոլորշիացումը բույսի կողմից և զբանական մասար: Փորձեր՝ վորպնք ցույց կությունը բույսի կյանքի համար: Փորձեր՝ վորպնք ցույց են տալիս ջրի գոլորշիացումը բույսի կողմից:

Յերաշտի գեմ պայքարի խնդիրները Զ-րդ հնգամյակում:

6. ԲՈՒՅՍԵՐԻ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆԸ (1 ԺԱՄ)

Թթվածնի գործածությունը և ածխաթթու գաղի արտադրումը բույսի կողմից շնչառության պրոցեսում:
Շնչառության հատուկ որգանների բացակայությունը
բույսերի մեջ:

7. ԲՈՒՅՍԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

(Քաղաքի դպրուցում՝ 3 ժամ, գյուղի՝ $2^{1/2}$ ժամ)

Ծաղկված՝ վորպես բույսերի բազմացման սեռական որգանը: Ծաղկի կառուցվածքը, ծաղկի գլխավոր մասերը,— առեջքներ և վարսանդներ: Փոշոտումը: Քամու և միջամտների գերը բույսերի փոշոտման մեջ: Քաղաքաբ՝ բեղմնավորության մասին: Սերմի և պտղի առաջնալլը: Արհեստական փոշոտումը և նրա նշանակությունը նոր տեսակի բույսեր առաջացնելու մեջ: Միջուրինի և բուսաբուծական կայանների նվաճումները: Բուսաբուծական ինստիտուտը, բուսաբուծական փորձնական կայանները Աբխազիայում, նրանց աշխատանքը և նվաճումները: Քաղաքաբ՝ ծաղկավոր բույսերի բուսաճական բազմացման մասին (մատներով, ձյուղերով, կոճղեզներով, ծառակոճղերով), և նրա նշանակությունը գյուղատնտեսության պրակտիկայում: Քաղաքաբ՝ անծաղիկ բույսերի մասին:

ՏԱՆՈՂ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ:

I. ԾԽԱԽՈՏԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

Հողի նախապատրաստելը ծխախոտի տնկման համար և նրա պարարտացումը: Պայքարը վնասատուների գեմ տնկումից առաջ դաշտում շաղ տալով թունավորած հատիկներ, և հիվանդությունների գեմ՝ շիթիներին բուժիչ լուծվածքը սրակելով:

Սերմը ցանելու ժամանակը և կանոնը և շիթիլի ալնելը դաշտում:

Խնամք ծխախոտի վրա (պայքար մոլախոտերի գեմ, ջրաքաշ կանաչներ անցկացնելը պլանտացիայում և այլն:

Ծխախոտահավաքի ժամանակը և կանոնը:
Մշակույթի նշանակությունն արդյունաբերության մեջ և ծխախոտի ֆաբրիկաները:

2. ԹԵՅԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ:

Հողային պայմանները թեյի մշակույթի բազմացման համար՝
թեյի թփի առանձնահատկությունը և նրա բազմացման միջոցները (սերմերով և սածիներով):
Խնամք թեյի վրա և հողի պարարտացումը:
Վնասատուները և պայքարը նրանց դեմ:

3. ՅԵԴԻԹՏԱՅՈՐԵՆԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ:

Հողամասի նախապատրաստելը մինչև հերկելը: Առաջնական և յերկրորդ հերկ, սերմի ընտրումն, ցանքը սկսելու և ավարտելու միջոցները:

Սրտի խնամքը (թորիելը, ավելորդ մատների կարելը):
Վնասատուները և պայքարը նրանց դեմ:

4. ՊՏՂԱՏՈՒ ԾԱՐԵՐԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ:

Կախված ձյուղերի կարելը ձմբանը և վաղ գարնանը,
չոր ձյուղերի հավաքելը, բների և ձյուղերի մաքրելը մասնաւուց, ծառալուներից և նրանց ներկելը կրի և յերկաթի մուռանը, ծառալուներից և սիստեմատիկ պայքար մոլախոտերի գեմ:

Պայքարի միջոցները պտղատու ծառերի վնասատուների և հիվանդությունների դեմ:

5. ԽԱՂՈՂԻ ԱՅԳՈՒ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

Համատարած թորիում՝ խաղողի այգու, նախքան բուսահատութի շարժումը, մատների կարելը՝ նախ քան բողոքութիւնների ուռչելը և նոր վազներ տնկելու միջոցները:
Բողոքների այգու մշտական խնամքը (փորելը, թաղելը և այլն):
Պայքարի միջոցները նրանց հիվանդությունների դեմ:

6. ԲԱՆՁԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ:

Հողի հախապատրաստելը բանջարեղենների ցանելու և անկելու համար, նրանց ամենաարածված տեսակները, սերմերի ցանելը, շիթիլի տնկելը, շիթիլի խնամքը: Բանջարամշակությունների հերթափոխությունը նրանց բերքատվության բարձրացման համար: Պայքար վատառառների դեմ:

7. ԳԵՐԱՆԻ (ԽՈՐԴԵՆՈՒ) ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ:

Հերկը և հողի հանքային պարարտացումը: Գերանի ճյուղերի բազմացումը և անկումը: Պահանտացիայի խնամքը անկելուց հետո, բերքահավաքը և նրա հետագա մշակումը:

III. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԻՄՔԵՐԸ:

(Քաղաքի դպրոցում՝ 20 ժամ, գյուղի՝ 15 ժամ)

Ն Ե Ռ Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն (1 ժամ):

Կենդանիների կենսաբանությունը՝ կենդանիների որդանիզմի կառուցվածքի և կյանքի մասին վիտությունն եւ: Քաղաքաբար՝ կենդանի բջիջների մասին: Քաղաքաբար՝ գործարանի (որգանի) և կենդանի որգանիզմի գործարանների սիստեմի մասին: Կենդանիների կենսաբանությունը՝ անառնաբուծության գիտական հիմքն եւ: Քաղաքաբար՝ ընտանի կենդանիների ծագման մասին: Աղցիալիստական անառնաբուծության խնդիրները շրջ հնագամյակում: Կենդանիների կենսաբանության դերը անառնաբուծության զարգացման մեջ:

Կենդանիների կենսաբանության ուսումնասիրության նշանակությունը՝ ճշտությամբ հասկանալու համար բնությունը և տիրապետելու զոռակինիկային:

I. ՇԱՐԺԻՉ ԱՊՈԱՐԱԾԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ

(Քաղաքի դպրոցում՝ 2 ժամ, գյուղի՝ 1 $\frac{1}{2}$ ժամ):

Կմախքը և մկանները՝ կենդանիների մարմնի շարժիչ ապաբարատն են: Բնական կմախքի կամ աղյուսակի ցուցագրումը: Կմախքի նշանակությունը՝ վորպես մարմնի հե-

նարանի և ներքին գործարանների պաշտպանի: Քաղաքաբար՝ վորպաշտականիոր և անվորդնաշար կենդանիների մասին: Կմախքի կառուցվածքի պլանը: Մկանների վորպաշտականիոր կպածվիլը: Զգվողականությունը՝ վորպես մկանների վիճակորը լինելը: Զգվողականությունը՝ վորպես մկանների վրա: Կենդանիների առանձնահատկությունները՝ աշխատանքի համար ոգտագործության մեջ:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՆՆԴԱԲՈՒ

ԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ:

(Քաղաքի դպրոցում՝ 4 ժամ, գյուղի՝ 3 ժամ):

Մնունիլը՝ վորպես որգանիզմի կենսագործունեյության համար անհրաժեշտ նյութերի և եներգիայի աղբյուրը: Մնունիյութերի կազմը՝ ածխաջրեր, սպիտակուցներ, ճարպեր և այլն: Աղյուսակների և կոլեկցիաների ցուցադրում:

Մարսողության ավագարատի կառուցվածքը և նրա կառուցվածքի առանձնահատկությունները տարբեր կենդանիների մեջ: Աղյուսակների ցուցադրումը: Մնադի փոխանիների խոռոչում, ստամոքսում և աղիքներում: Փոխումը բերանի խոռոչում, ստամոքսում և աղիքներում: Գաղափար՝ մնադիյութերի մասին: Մարսված կերակրի գաղափար՝ մնադիյութերի մեջ և նրա բաշխումը կենդանու ներծումը աղիքների մեջ արյան ըրջանառության միջոցով: Մնադիյութերի վերածումը կենդանու մարմնի նյութերի:

Սպիտակուցների նշանակությունը՝ վորպես նյութերի, վորոնք անհրաժեշտ են կենդանու մարմնի կառուցվածքի վորոնք անհրաժեշտ են կենդանու մարմնի կառուցվածքի համար: Ածխաջրերի և սպիտակուցների նշանակությունը համար աղիքների աղիքների մասին: Գաղափար՝ կերակրելու գիտական մասին: Կենդանիների կերակրի պահանջը՝ հիմունքների մասին: Կենդանիների կերակրի պահանջը՝ հասակից, կշռից, արգյունականությունից և այլն: Գաղափար՝ գոյությունը պահերականությունից և արգունաբերությունը բարձրացնող կերերի մասպանող և արգունաբերությունը բարձրացման կերակրելու նշանասին: Կերակրումը՝ գիտականորեն դրվագ լինելու նշանասին: Կերակրումը՝ կենդանիների արդյունաբերականությունը բարձրացնելու համար:

3. ՇՆԶԱՐՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Թթվածնի անհրաժեշտությունը կենդանու կյանքի համար: Թոքային շնչառությունը բարձրագույն կենդանիների մեջ: Թոքերի կառուցվածքը, թոքային փամփուշտիկները: Աղյուսակների ցուցադրումը: Գաղափար՝ գաղափոփոխիչ մասին թոքերի մեջ: Թթվածնի բաշխումը կենդանու մարմնի մեջ արյան միջոցով: Անասունների խնամքը — առողջապահական պահանջմանը անհամանոցի վերաբերյալ:

4. ԱՐՅԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

(Քաղաքի գոլոցում՝ 3 ժամ, գյուղի՝ 2 ժամ):
Արյունը, նրա կառուցվածքը: — արյան հեղուկը, արյան սպիտակ և կարմիր գնդիկները:

Արյան կաթիլը միկրոսկոպի տակ:
Արյան նշանակությունը կենդանու մարմնի մեջ մարսողական նյութերի և թթվածնի բաշխման գործում: Կաթնասունների արյունատար համակարգության կառուցվածքը — սիրար, զարկերակները, յերակները (վենաները), մաղանոթները:

Աղյուսակների ցուցադրումը: Սրտի աշխատանքը և արյան շարժումը կենդանու մարմնի մեջ: Արյան շրջանառության ամենապարզ սխեմայի ցուցադրումը:

5. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ 2 (ԺԱՄ)

Սեռական գեղձերը և սեռական բջիջները: — սպերմատոզիդ և ձու: Աղյուսակների ցուցադրում: Բեղմնավորումը — արական և իգական սեռական բջիջների միացումը: Արհեստական սերմնափորումը և նրա նշանակությունը անապահության ազնվացման պրակտիկայում: Գաղափար՝ սպզմի և պտղի զարգացման մասին: Կաթնասունների կաթով կերակրելը: Մաեղման պրոցեսների գերակշռությունը անկման պրոցեսների վերաբերմանը աճող որգանիզմի մեջ: Մատղաշ կենդանիների խնամքի առանձնահատկությունները: Գաղափար՝ գյուղատնտեսական կենդանիների նոր ցեղական տեսակներ առաջ բերելու մասին: Կենդանիների ցեղական տեսակների առաջ բաշխումը մարդու կանաչական՝ վորպես հերքումն առերտերական ուսումունքի՝ այն

մասին, թե կենդանիների բաղմապիսի տեսակները աստվածային ստեղծագործության հետևանք են:

6. ԶՈՈՄԻՆԻՄՈՒՄ

Խնամքն ընտանի կենդանիների վրա, բնակարան, ջրամբարներ, նորմայով կերակրելը, կերաբույսեր: Սիլոսային կեր: Սիլոսային նորերի կառուցումը և սիլոսացումը: Կենդանիների ամենատարածված հիվանդությունները և պայքարի մեջոցները նրանց գեմ: Անասունների ցեղային տեսակների աղնվացման անհրաժեշտությունը՝ ավելի շահ ստանալու համար: Բեղմնավորության կայանները: Մատղաշի կերին և յեղներին աշխատեցնելու անկարելիությունը՝ ձիմանված հասակին չհասած շրջանում: Կաթնամթերքասանմանված հասակին չհասած շրջանում:

Ընտանի թռչունների խնամքը, նրանց ամենատարածեալ գործակոր ցեղային տեսակները տվյալ շրջանի համար: Ճուղավոր ցեղային տեսակները արհեստական բաղմացումը (ինկուբատոր): Ընտանի տերի արհեստական բաղմացումը (ինկուբատոր): Պայքարի միջոցները նրանց գեմ:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

(Քաղաքի գոլոցում՝ 2 ժամ, գյուղի՝ 1 ժամ):
Կանաչ բույսերի նշանակությունը բնության և գյուղական մեջ: Բուսաբուծության կապը անասնագատնական մեջ: Բուսաբուծության հետ: Բուսաբուծության և անասնաբուծության հիշտ զուգակցումը՝ սոցիալիստական գյուղատնտեսական պրակտիկայում: Գիտականորեն կազմակերպված սոցիալիստության մեջ: Գիտականորեն կազմակերպված գորպես միակ ուղին՝ բնուտական գյուղատնտեսությունը գորպես միակ ուղին՝ բնությանը լիովին տիրապետելու գործում:

IV. ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

(Քաղաքի գոլոցում՝ 10 ժամ, գյուղի՝ 5 ժամ):
Ն Ե Բ Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Լ (30 ըոպե):

Ինչպես ծագում առավ և զարգացավ զիտությունը մարդու մասին: Ինչպես եր պայքարում կրոնը գիտության դեմ: Գիտության նշանակությունը մարդու և գիտության դեմ:

Նրա առողջապահության համար, նաև աշխատանքի բարելավման և սացինալիզացիայի համար:

Գիտության ուսումնասիրության նշանակությունը մարդու մարմնի մասին աշխատավորների համար:

1. ԻՆՉՐԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ՅԵՎ ԻՆՉՐԵՍ Ե ԱՊՐՈԽՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆԸ.

(Քաղաքի դպրոցում՝ 5^{1/2} ժամ, գյուղի՝ ^{1/2} ժամ):

Բարձրագույն կենդանիների և մարդու մարմինների նմանությունը արտաքին կառուցվածքի մեջ: Տարբերությունը՝ մարդու մարմնի ուղղաձիգ դրվածքը (ուղղահայց քայլվածքը):

Կմախքը: Կենդանիների և մարդու կմախքի կառուցվածքը: Մարդու կմախքի առանձնահատկությունները կառուցվածքի մեջ՝ կապված նրա մարմնի ուղղաձիգ դրության հետ: Մարդկային մարմնի մկանները և նրանց աշխատանքը: Մկանային գործունեյության նշանակությունը աշխատանքային պրոցեսում: Մարսողության, շնչառության, արյան շրջանառության և արտաթորումների գործարների կառուցվածքը և արտաթորումները մարդու մարմնի մեջ: Աշխատանքի ազդեցությունը մարդու մարմնի հիշյալ գործարանների գործունեյության վրա.—Կերակրի և թթվածնի ահազին պահանջնյութերի և եներգիայի ահազին վատնումը, սրտի գործունեյության ուժեղացումը, արյան հոսանքը գեղի աշխատող գործարանները, թոքերի գործունեյության ուժեղացումը, քրանքի արտաթորումը և այլն: Մարդու նյարդային համակարգության կառուցվածքը:

Մարդու գլխի ուղեղի բարձր զարգացումը (գլխի և մեջքի ուղեղների կշռի համեմատությունը, գլխի ուղեղի չափը և շիռը, մեծ ուղեղի կիսագնդի թաղանթի ակունքը): Դրա հետ կապված մարդու մտավոր բարձր զարգում: մտածողություն և գիտակցություն:

Մարդու զգայարանքները:

Նմանությունը բարձր կենդանիների և մարդու մարմնների ներքին կառուցվածքի մեջ: Տերտերական ուսմունքի մունկությունը մարդու աստ-

վածություն բնության մասին: Մարդու կենդանական բնությունը: Ինչումն և ամենազլավոր արբերությունը մարդու և կենդանիների մեջ: Բայտ կրօնական „ուսմունքի“ մարդու արբերություն և կենդանիներից „հոգու“ ներկայությամբ: Տերտերական „ուսմունքի“ անդիմականությունը և քաղաքական վասակարությունը „հոգու“ մասին, նրա ասավածային ծագման, անմահության և հանդերձյալ կյանքի մասին: Գործիքների արտագրությունը և գործածությունը և գիտակցական գործունեյությունը ըստ նախորդ կալմած պլանի—ահա ամենազլավոր արբերությունը մարդու և կենդանիների մեջ: Աշխատանքը՝ վորտես մի անհրաժեշտ պայման մարդու գոյության համար:

2. ԻՆՉՐԵՍ ԱՐԱԶ ՅԵԿԱՎ ՄԱՐԴԸ (4 ԺԱՄ)

Գիտությունը և կրոնը մարդու ծագման մասին: Կրոնի „ուսմունքի“ սեանկությունը մարդու՝ աստծու ձեռքսկանի աշխատագործության մասին: Դարվինի ուսմունքի հիմնավորումը մարդու բնական ծագման մասին կենդանական նախնիքներից:

Մարդու կենդանական նախնիքներից ծագման առաջնային մարդկայնացումը: Աւղղաձիգ քայլվածքը և գրա հետ բերի մարդկայնացումը: Աւղղաձիգ քայլվածքը և գրա հետ բերի մարդկայնացումը: Աշխատանքի մարմնի կապիկների գործումը, վորպես մարդկայնացման սկիզբը: Աշխատանքի գերազանցությունը մարդկայնացման պրոցեսում: Աշխատանքի նշանակությունը խոսակցական լիգի վի զարգացման մեջ: մտածողության և գիտակցության նշանակությունը: Վոչ թե աստված, այլ աշխատանքն ստեղծեց մարդուն:

Պայքարի անհրաժեշտությունը կրոնի դեմ գիտության և աելինիկայի համարին մեջ:

σ ρ γ φ β σ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

ԿԻՍԱԳՐԱԴԵՏՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՅՈՒՅՈՒՆ:

Աշխարհագրության դասավանդումը կիսագրագետների դպրոցակ ունի ընդլայնելու աշակելատների աշխարհագրական մտահորիզոնը, ապա նրանց հիմնական գաղափար արքածականության մասին և գիտակցական կողմնորոշման տարրական ունակություններ՝ աշխարհագրական բարտեղի վրա:

Հաշվի առնելով կիսազբագետ աշակերտների դիտելիք-ների բացակայությունը աշխարհազրության բնադրավառում և առարկային հատկացրած ժամերի սահմանափակ քանակը կիսազբագետների դպրոցում (36 ժամ՝ քաղաքում և 28 ժամ՝ գյուղում), ներկա ծրագիրը կառուցվում է գիշերական աշխարհազրության նյութի վրա:

Ծրագրի նպատակն ե տալ ֆիզիքական աշխարհագրության հիմունքները սխտեմատիկորեն մեկնաբանելու համար անպայմանորեն անհրաժեշտ նյութեր, վերացնելով ավելորդ ծանրաբեռնությունը, վորը կըդժվարացներ աշխատանքը ժամանակի սակագության պատճառով:

Սշխատանկը՝ ֆիզիքական աշխարհագրությունից պիտի իր բոլոր բաժիններում կապված լինի աշխարհագրության քարտեզի հետ, վորպեսզի աշակերտը կարողանած է բերել նրանից ոգավելու ուսուկություններ։

Ծրագիրը բոլոր բաժիններում ել նշում ե աշխարհա-
զրական անվանացանկի վորոշ ժավալ, վորի յռ-բացումը
հիմք կղնի քարտեզի ճանաչման: Աշխարհազրական անվա-
նացանկի ընտրության ժամանակ բավականաշափ տեղ ե
հատկացրած Ա. Խ. Հ. Մ. աշխարհազրաւթյանը, վորովինեակ
անհրաժեշտ ե ավելի մասնաւան զիաելիքներ տալ իր
յերկրի մասին:

Առաջին թեման տալիս է քարտեզը կարդալու անրաժեշտ ունակությունները՝ նախ և առաջ արվում են թեթև և հանրածանոթ հասկացուղությունները հորիզոնի և

Կառ Խաղմերի մասին:

Հաստակագծի վրա հեշտությամբ յուրացվում եւ մասշտաբի գործածությունը, նրա ոգնությամբ տարածության չափելը. այս դեպքում կարելի յէ սահմանափակվել միայն գծային մասշտաբով վարժություններ կատարելով իսկ թվույթն մասշտաբի մասին բավական կլինի տալ լոկ գաղտնաբառ: Տրվում են ամենասպարզ ասրացույցներ յերկրի գնդաձևության մասին: Վորովինեաւ այս թեմայում գեռ ևս չեն քննվում յերկրի շարժման մասին հարցերը, ապա բեկունքը վորոշումը արվում ե՝ վորպես յերկրագնդի հյուսիսային և հարավային կետերի մասին հասկացողություն միայն: Քարտեզին անցնելու ժամանակ նպատակահարմար և միենույն տարածության չափերը կատարել հարմար մասշտաբով քարտեզների վրա (ցանկալի յէ ու տարրեր մասշտաբով քարտեզների վրա (ցանկալի յէ ու նենալ իր շրջանի, իր հանրապետության, յեվրոպական և ասիական Ա. Խ. Հ. Մ. ամբողջ Ա. Խ. Հ. Մ. քարտեզները):

Աստիճանացանցի ուսումնառության շահագործությունը կազմությունը կավոր և վերցնել յերկրագունդը (պլոբուսը), ցույց տալ նրա վրա զուգահեռականներն ու միջորեյականները, ուշագրություն դարձնել նրանց ուղղության վրա. Տորիզոնի շաղմերի համեմատությամբ, համեմատել տարբեր միջորեյականների և տարբեր զուգահեռականի յերկարությունը հավասար և մոտավորապես հասարակածի կեսին): Գլոբուսի վրա հասկացողություն տալ աշխարհագրական յերկարության և լայնության մասին և նրանից հետո անցնել աստիճանացանցի վրա աշխատանքի կիսագնդերի քարտեզով: Կիսագնդերի և աշխարհի (մերկատորի) քարտեզների ցուցագրումը հնարավորություն և տալիս համեմատելու նրանց վրայի ասափանացանցի պատկերագորումը գլոբուսի հետ (միջորեյականների տարբեր մեծությունները և տարբեր հետալորությունները յերկու զուգահեռականների միջև կիսագնդերի քարտեզի զանազան մասերում. միջորեյականների խաչաձև հաստան բացակայությունը բնենուներում և բոլոր զուգահեռականների հավասարաշատ մեծությունը Մերկատորի քարտեզի վրա):

Քարենու և
Կիսազնդերի քարտեղի ուսումնաբրուժյուսը պազառ
և ցամաքի և ջրերի դասավորությունից Յույց տալով

քարտեղի վրա ջրային տարածությունների և ցամաքի պայմանական նշանները, պետք աշակերտներին յուրացնել տալ՝ յերեք ովկիանոսները, նշանափոր ծովերը, վեց աշխարհամասերը. ամբազնդել այդ՝ հարցնելով աշակերտների մեծ մասին. զրա համար վարժություններ կատարել հորիզոնի կողմերի մեջ կողմնորոշվելու վերաբերյալ—տալով հարցեր՝ ինչն ե գանվում արևմայան կողմը, արևելյան կողմը, վո՞ր ովկիանոսն ե հարավային կողմը և այլն. Դրանից հետո հեշտ ե անցնել ամենախոշոր տերությունների դիրքի ուսումնասիրությանը. նրանց յերկրի վրա ունեցած դիրքի ուսումնասիրությունը հետաքրքիր և արժեքափոր տեղեկություններ ե ավելացնում այդ տերությունների մասին նրա արդեն ունեցած քաղաքական գաղափարներին. Այս գեպքում անհրաժեշտ է աշակերտներին վարժություններ տալ՝ հորիզոնի կողմերը գտնելու վերաբերյալ, աշխարհագրական լայնությունը և յերկարությունը փորոշելու, մասշտաբով տարածությունները չափելու. վերաբերյալ: Աշխարհագրական քարտեղի յուրացումը ձեռք չի բերվում մի պարապմունքով: Անցածը պիտի ամբազնդել կրկնությունների միջոցով՝ հետեւալ դասերին:

Յ ե ր կ ը ո ր դ թ ե մ ա յ ո ւ մ ուսումնասիրվում են՝ յերկրագնդի կառուցվածքը, յերկրի կեղեկի վրա տեղի ու նեցող նշանափոր յերեսոյթները, և մակերևույթի ձևերը: Բացի պատմելուց ցանկալի յե թեմայի մշակման ժամանակ ոգտագործել զննական պիտոյքները.—ցույց տալ լեռների պատկերներ, հրաբուխի պատկերներ և այլն: Աշխատնքը՝ քարտեղի վրա, պիտի սովորեցնի կարդալ քարտեղի վրա յերկրի մակերեսոյթի ձեր: Այս գեպքում պիտի ծանրաբեռնել նրանց բազմաթիվ աշխարհագրական անուններով:—խորթ և գժվարարտասանների անունները սաստիկ գժվարացնում են աշակերտներ: Ուստի ընական ե, փոք Ս. Խ. Շ.-ից մեծ քանակությամբ անուններ են ընտրված ծրագրում:

Յ ե ր ը ո ր դ թ ե մ ա ն անհրաժեշտ հասկացողություններ ե տալիս յերկրի ջրային տարածության և նրա նշանակության մասին: Աշխատանքը նմանապես վերջանում է քարտեղի ուսումնասիրությամբ, այն նպատակով, փոք կա-

րողանան կարդալ զետեր, ջրանցքներ ցույց տվող պայմանական նշանները, և փոք յուրացնեն անհրաժեշտ անվանացանկը:

Զ ե ր կ ը ո ր դ թ ե մ ա յ ո ւ մ նպատակն ե տալ աշակերտներին յերկրի շարժման մասին ճշգրիտ զիտական հասկացողություններ: Հարկավոր ե հակադրել զիտության տվյալները հասակավոր աշակերտի արեգակի տեսանելի շարժման վրա ունեցած անձնական դիտողություններին: Հարկավոր ե սկզբից ճշտել ինչպես ենք մենք տեսնում արեգակի կարծեցյալ շարժումը, փորակ ե նրա յելքն ու մուտքը, ինչպես տարբեր չափով են տաքացնում արեգակի ճառագայթները՝ նրա տարբեր բարձրության վրա գըկի ճառագայթները՝ նրա տարբեր բարձրության վրա գըկամանակ՝ որպա ընթացքում: Տարեկան շարժմանն անցնելու ժամանակ վորոշել՝ ինչպես են փոխվում յերեկանցարքը և պիշտությունը և արեգակի բարձրությունը հարկութիւնի վրա տարբական յեղանակների ընթացքում: * Դրանից հետո հարկավոր ե պարզ հասկացան շամանակը յերկրի առաջարկությունը և արեգակի բարձրությունը հարկութիւնը հարկութիւնը և հարկավոր աշակերտների համար ամենաընդհանրաժեշտ է հասակավոր աշակերտների համար ամենաընդհանրությունը տալ յերկրի և մոլորակների համուր հասկացողությունը տալ յերկրի և արեգակի պատկանական ծագման մասին արեգակից և հակադրել այդ զիտական բացման մասին գոտիների, ծովային և ցամաքային կլիմայի մասին և այլն:

*) Արեգակի կեսորյա բարձրության ամենաբարձր կետը (ամբան արեգագործի որը) ամեն վայրի համար ել կարելի կլինի հաշվել արեգագործի ֆորմուլայով՝ $90^{\circ} - \alpha + 23\frac{1}{2}^{\circ}$, ամենացածր կետը (ձմբան հետեւալ ֆորմուլայով՝ $90^{\circ} - \alpha - 23\frac{1}{2}^{\circ}$, փորտեղ արեգագործի որը) հետեւալ ֆորմուլայով՝ $90^{\circ} - \alpha - 23\frac{1}{2}^{\circ}$, վորտեղ արեգագործի կետը վայրի աշխարհագրական լայնությունը:

Վեցերորդ թեմա: Աշխատանքը քարտեզի վրա . . .
պատկերի վրա. . . այս թեմայում պարզ հասկացուղություն
պիտի տալ յուրաքանչյուր զոնայի գրության մասին:

Յեթերորդ թեման հասկացողություն և տալիս
լերկրագնդի վրա առլորդ ժողովուրդների մասին (ցանկալի
յեցույց տալ զանազան ժողովուրդներ պատկերացնող և
բուրժուական ցեղային թեսրիայի քննադատությունը բնու-
րոշող նկարներ): Քարտեզի վրա ուսումնասիրվում ե ժո-
ղովուրդների բնակությունը յերկրի զանազան մասերում:

Ութերորդ թեմա: Ա. Ի. Հ. Մ. Ֆիզիքական քար-
տեզը հիմնագործում ե աշխարհագրական հասկացողությունն-
երի վրա, վորոնք ձեռք են բերված նախընթաց թեմանե-
րում, կրկնում են այսուեղ ստացած միության աշխարհա-
գրության վերաբերյալ տեղեկությունները և միջիշ ընդ-
լայնում այն:

Իններորդ թեման ևս կրում է նույնպիսի բնույթ՝
մասամբ կրկնության, մասամբ աշխարհի պետական
բաժանման քարտեզի խորացման և ընդլայնման բնույթ:

Ֆիզիքական աշխարհագրության թեմաների ուսում-
նասիրությունը պիտի կապված լինի գիտական աշխար-
հայացքի զարգացման հարցերի հետ, մյուս կողմից ել այդ
թեմաները կարող են կապված լինել այժմեյականության
հարցերի հետ: Աշխարհագրության վերաբերյալ աշխատանք-
ների հենց սկզբից ուսուցիչն ինքն իր համար պիտի
պարզի ծրագրային նյութը, վոր նա մտադիր ե մշակել
աշակերտների հետ և կազմի ծրագրի մշակման որացույ-
ցային պլանը: Խմբի հետ առաջին ծանոթության ժամա-
նակ դասառուն պիտի պարզի, թե ինչ տեղեկություններ
ունեն աշակերտները աշխարհագրության առարկայից, և
իր հետագա աշխատանքների մեջ ոգտագործե այն, վորպես
յելանյութ:

Վորպեսզի ուսուցման ամեն մի տվյալ մոմենտին կա-
րելի լինի պարզել, վորպիսի հառաջադիմություն են ցույց
տալիս ծրագրի մշակման մեջ խումբը և առանձին աշա-
կերտները, անհրաժեշտ ե յուրաքանչյուր պարագմուքի և
թեմայի վերջում անցկացնել ընթացիկ և պարբերական
հաշվառում ծրագրի մշակման հաջողության վերաբերյալ:
Իր աշխատանքի վորակը ապահովելու նպատակով դա-

սառուն պարտավոր ե մանրազններն պատրաստվել դասի
համար՝ վորպես ամբողջ թեմայի վերաբերյալ՝ հաշված մի
քանի պարագմունքների համար, այնպես ել ամիջապես
ամեն մի առանձին դասի համար:

Այդ նպատակով դասառուն նախորոք վորոշում ե
ավյալ դասի բովանդակությունը՝ կապելով այն նախըն-
թաց դասի հետ: Նախորոք պատրաստում ե դասի համար
պահանջվող պիտույքներն ու սարքավորումները, նշում ե
թե ինչպիսի մեթոդական ձևերով պիտի մշակվեն դասի
թեմայի առանձին մասերը, մտածում ե դասին տարգող
աշխատանքի համար խմբի կազմակերպման մասին, կախ-
ված՝ դասի թեմայի բնույթից, ուսումնական առկա սար-
քավորումից և աշխատանքի մեթոդներից: Նշում ե մշակ-
վելիք հարցերի վերաբերյալ գիտելիքների հաշվառումն անց-
կացնելու կարգը և պլանավորում ե մշակվելիք նյութը
բայց ժամանակի, յենելով 2-ժամյա պարագմունքից (հինգ
րոպեյի պարտադիր դադարով այդ 2 ժամի միջև):

Ժամանակի պակաս քանակությունը գյուղական մի-
ջավայրի համար (28 ժամ) պահանջում ե զգալի չափով
կրճատելու ծրագիրը, ընտրելով միայն ամենակարևոր հար-
ցերը:

Զորբորդ թեման պիտի ընդգրկի հարցերը՝ յերկրի ձեռքի
մասին, նրա որեկան և տարեկան շարժումների մասին:
Կարելի յեցուքս ձգել այս բաժինները՝ արեգակնային
համակարգությունը և յերկրի ծագման մասին հարցերը:

6-րդ թեմայում ուշադրությունը կենտրոնացնել բա-
րեկառն գոտու զոնայի ուսումնասիրության վրա, տալ
միայն արևադաշտին բնույթյան ընդհանուր բնույթագիրը:

8-րդ թեմայում նույնպես հարկավոր ե կրճատել ան-
վանացանկը, թողնելով միայն ամենակարևոր անունները:

Ուսումնական ժամանակի մոտավոր բաշխումը:
Քաղաքի գյուղի
Վարիանտ Վարիանտ

1. Հատակադիմ և քարտեզ	6 ժամ	5 ժամ
2. Յերկրի կեղել	4 "	4 "
3. Ովկիանոսներ, գետեր և լճեր	4 "	2 "
4. Յերկր. որ. և տար.	շարժումները	3 "

5. Կլիման	3 "	2 "
6. Հողա—բուսական շրջաններ	4 "	3 "
7. Յերկրագնդի բնակչությունը	2 "	2 "
8. Ա. Խ. Հ. Մ. Փիզ. քարտեզը	6 "	4 "
9. Աշխարհ. պետ. բաժ. քար. 2 "	2 "	2 "
10 Հաշվառում	2 "	2 "
	36 Ժամ:	28 Ժամ:

Ծ Ր Ա Գ Ի Ռ

I. Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Ծ Յ Ե Վ Ք Ա Ր Տ Ե Զ

Գաղափար հորիզոնի մասին: Հորիզոնի կողմերը, նըրանց գտնելը ըստ արեգակի, ըստ աստղերի: Կողմացույց (կոմպաս):

Հատակագիծը՝ վորպես փոքրիկ հողաբաժնի պատկերը: Դատարանի հատակագիծը: Գաղափար՝ մասշտաբի մասին, նրան նկարելու ձևերը.—թվային և գծային մասշտաբներ, Հատակագիծի նշանակությունը յերկրի պաշտամության գործում և սոցշինարարության մեջ: Կոլխոզի կամ քաղաքի հատակագիծը: Տարածության չափելը հատակագիծի վրա ըստ մասշտաբի: Հատակագիծի կողմնորոշումը ըստ հորիզոնի կողմերի: Ախտազիայի Ա. Խ. Հ.-յան քարտեզը, Անդր-կովկասի քարտեզը:

Յերկրի ձեր: Ինչպես եյին պատկերացնում իրենց հին ազգերը յերկրի ձեր մասին: Յերկրի գնդաձեռւթյան ապացույցները.—հորիզոնի ընդարձակումը՝ դեպի վեր բարձրանալու ժամանակ, ծովի վրա շարժվող շոգենավի դիտումը. ճանապարհորդություններ աշխարհի շուրջը: Յերկրագնդի մեծությունը:

Գլոբուսը՝ յերկրի պատկերն եւ Բևեռները՝ վորպես յերկրագնդի հյուսիսային և հարավային կետերը, Հասարակած: Յերկրագնդի նկարը կիսագնդերի քարտեզի վրա և Մերկատորի քարտեզի վրա: Քարտեզի կողմնորոշումը՝ ըստ հորիզոնի կողմերի:

Յամաքն ու ջուրը յերկրագնդի վրա: Աշխարհի մասեւ

ըլ՝ Յերկրասիա (Յելլոպալա և Ասիա): Աֆրիկա, Ամերիկա (հյուսիսային և հարավային), Ավստրալիա, Անտարկտիդա: Ովկիանոսները՝ Մեծ կամ Խաղաղ, Ասլանտյան, Հընդկական: Գաղափար ծովի մասին: Նշանավոր ծովերը՝ Հյուսիսային Բևեռային, Միջերկրական: Աստիճանացանցը գլուխություն և քարտեզների վրա: Միջորեյականներ: Գլխավոր միջորեյականը: Աշխարհագրական յերկարություն, Զուգահեռականներ: Աշխարհագրական լայնություն:

Խորհրդային միության դիրքը կիսագնդերի քարտեզի վրա: Նշանավոր կապիտալիստական յերկրների դիրքը կիսագնդերի քարտեզի վրա.—Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հ. Ա. Մ. Ն. Յապոնիա, Չինաստան:

II. ՅԵՐԿՐԻ ԿԵՂԵՎԸ 4 (ԺԱՄ)

Յերկրի մակերեսութի ձևերը: Բացարձակ և համեմատական բարձրություններ, բարձրություններ (բարձրավանդակներ), լեռներ: Նրանց պատկերավորումը քարտեզի վրա: Յերկրի մակերեսութի քայլքայումը ողի ազգեցությունից և ջրերի վողողումներից:

Ընդերքի բրածո հարստությունները՝ եներգիայի և հումքի նշանավոր աղբյուրներն են: Բրածոների տեղը հումքի մասերում և աշխարհի գլխավոր պետություններում:

Աշխարհի մասերի մակերեսութի ուսումնասիրությունը քարտեզի վրա:

Անվանացանկը՝ յուրացման համար:

Լեռներ՝ Ուրալյան, Կովկասյան:

Ասիա՝ Արևմտյան Սիբիրի, Արալո—Կասպյան, Չինական ցածրություններ: Լեռնային յերկր՝ Պամիր, Լեռնադիաներ: Տյան—Շան, Հիմալայ (Եվրեստ 8840 մ.):

III. ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐ ՅԵՎ ԾՈՎԵՐ, ԳԵՏԵՐ ՅԵՎ ԼՃԵՐ (4 ԺԱՄ)

Ովկիանոսներ և ծովեր: Ովկիանոսների խորությունը՝ ծովի ջրի աղիությունը: Ծովային հոսանքներ՝ սառը և տաք: Ծովային ալիքներ, մակընթացություն: Ծովափնյատաք: Ծովային ալիքներ, մակընթացություն: ծովափնյատաք: Սև ծովը, Արխազիայի ծովափնյայ շերտը: Ծով-

ըի տրանսպորտային և արդյունաբերական նշանակությունը:
Սև ծովի նշանակությունը: Նշանավոր ծովային ճանապարհները և պայքարը նրանց համար: Նեղուցների և կղզիների նշանակությունը ծովային ճանապարհների վրա:

Ծովի անվանացանկը՝ Հյուսիսային Բևեռային, Միջերկրական, Սև, Բալտիկ:

Թերակղզիներ՝ Սկանդինավյան, Ղրիմի,
Կղզիներ՝ Մեծ Բրիտանիա, Յապոնիական, Սախալին,
Նեղուցներ՝ Զեբրալտարի, Դարդանելի, Բոսֆորի,
Բերինգյան:

Ջրանցքներ՝ Սուեդի և Պանամայի:

Ցամաքի տեսակները՝ գետնաջեր, աղբյուրներ:

Գետեր.—գետերի ջրաբաշխը: Վտակները: Գետերը՝ վորպես հազորդակցության կանապարհներ, եներգիայի աղբյուրներ, վոռոգման աղբյուրներ: Ջրանցքներ: Խոշոր գետերը աշխարհամասերում:

Լճերը.—հոսող և կանգնած լճեր, աղի և քաղցրահամ լճեր: Լճերի ցամաքելը:

Անվանացանկը.—գետեր՝ Վոլգան իր Ոկա և Կամա վտակներով: Կնեղը: Դունայ: Ռեյն: Ռը, Յենիսեյ, Լենա, Ամուր:

Անդրկովկասի և Արխազիայի գետերը:

Լճերը.—Լադոզի, Ոնեգի, Կասպյան, Արալյան, Բայկալի:

Անդրկովկասի և Արխազիայի լճերը:

IV. ՅԵՐԿՐԻ ՈՐԵԿԱՆ ՅԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ:

Արեգակը՝ վորպես ջերմության և եներգիայի աղբյուր յերկրագնդի վրա: Զերմության քանակի փոփոխությունը, վոր ստացվում է յերկրի վրա որվա տարբեր ժամերին և տարվա տարբեր յեղանակներին:

Արեգակի և այլ լուսատուների որեկան տեսանելի շարժումները: Յերկրագնդի որեկան պտույտը Բևեռները՝ վորպես յերկրագնդի անշարժ կետերը որեկան պտույտի ժամանակը յերկրի առանցքը: Յերեկվա և գիշերվա ներթափոխությունը: Յերեկվա և գիշերվա տեսողության փոփոխությունը տարվա ընթացքում: Արեգակի բարձրության

փոփոխությունը հորիզոնի վրա՝ ըստ տարվա յեղանակների. Յերմաստիճանի կախումը արեգակի բարձրությունից: Յերկրի տարեկան շարժումը արեգակի շուրջը. Յերկրի տառանցքի թեքությունը և տարվա յեղանակները յերկրագնդի վրա:

Արեգակնային համակարգը: Յերկրը՝ վորպես մոլորակներից մեկը: Համառոտ գաղափար յերկրի ծագման մասին: Կրօնական նախապաշտամունքները յերկրի մասին: Կարեռը մոմենտները գիտական աշխարհայացքի համար պայքարում (Կոպերնիկ, Բրունո, Հալլեյ):

V. ԿԼԻՄԱ (4 ԺԱՄ):

Յեղանակը, նրա ելեմենտները՝ ջերմաստիճան, քամիներ, տեղումներ: Հասկացողություն կիմայի մասին: Կիմայի նշանակությունը տնտեսության մեջ: Պայքար կիմայական վսասակար պայմանների դեմ: Կրօնական գաղափարները՝ կատված յեղանակի յերեւյթների հետ: Արեգակի տարբեր բարձրությունը հորիզոնի վրա՝ յերկրագնդի գանգաղան մասերում: Յերկրագնդի բաժանումը հինգ գոտիների: Արեգակներ և ընեւային ըրջաններ: Յուրաքանչյուր գոտու կիմայի աչքի ընկնող առանձնահատկությունները: Բարձր չերմաստիճանը և նրա տարեկան տառանումները բարեխառն գոտիումը տարվա յեղանակների: Յածը չերմաստիճանը սպառցյալ գոտիումը:

Ցամաքի և ջրի անհամաչափ տաքանալը: Ծովային և ցամաքային կիման: Արխազիայի կիման: Ծովային հոսանքների աղղեցությունը կիմայի վրա: Տեղի բարձրության աղղեցությունը կիմայի վրա՝ չերմաստիճանի որեկան և տարեկան սուր տառանումները: Տեղումների բաշխումը յերկրագնդի վրա: Խոնավ ըրջաններ: Յերկրագնդի անապատները:

VI. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ՀԱՆԱԿԱՆ ՔՈՆԱՆԵՐ (4 ԺԱՄ):

Հողի, բուսականության և կենդանական աշխարհի կախումն կիմայից: Նրանց տեղափոխումն յերկրագնդի վրա՝ ըստ գոնաների (գոտիների):

Բեեռային շրջաններ, տունդրաներ, անտառ, տափաստան, անապատ, յենթաարևադարձային շրջաններ, արևադարձային անտառներ և սավաննաներ: Յուրաքանչյուր զոնայի հողի բուսականության և կենդանիների բնութագիրը: Բնության ոգտագործումն ու փոփոխումը մարդու բողմից՝ կախված արդունաբերողական ուժերի և արդյունաբերական հարաբերությունների սիստեմայի զարգացման կետը թից ու չափից (ոգտագործումը սոցիալիստական սիստեմայում):

VII. ՅԵՐԿՐԱԳՆԴԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (2 ԺԱՄ):

Յերկրագնդի բնակված և անբնակ շրջանները: Յերկրագնդի բնակչության թիվը: Նրա դասավորությունը աշխարհի մասներում: Ժողովուրդների տարածումը յերկրագնդի վրա: Բուրժուական ցեղային և ազգային թեորիաները. նրանց դասակարգային բնույթը:

Գունավոր ցեղերի աշխատավորների շահագործումը և վոչնչացնելը կապիտալիստների կողմից: Ստրկական աշխատանքը գաղութներում:

Ազգային հարցի լուծումը Ս. Խ. Հ. Մ.-յան մեջ:

VIII. Ա. Խ. Հ. Մ. ՖԻԶԻՔԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԸ (6 ԺԱՄ):

1. Ս. Խ. Հ. Մ. աշխարհագրական դիրքը: Դիրքը Յերասիայում: Ս. Խ. Հ. Մ. ծովային սահմանները: Նշանավոր նավահանգիստները (քաղաքները): Ցամաքային սահմանները: Սահմանակից յերկրները: Անվանացանկ.—ծովերը՝ չյուսիսային, Բեեռային, Սպիտակ, Բարենցյան, Կարսկի, Բերինգյան, Ոխտյան, Յապոնական, Սև, Ազովյան, Ֆիննական ծոց, Բալտիկ ծով:

Թերակղիներ՝ կոլի, Կամչատկա, Ղրիմ:

Կղղիներ՝ Սախալին, Նոր Յերկիր:

Նավահանգիստներ՝ Լենինգրադ, Մուրմանսկ, Արխանգելսկ, Իգարկա, Վագրեմանուկ, Նովոսիստիկ

Ողեսսա, Բաթում:

2. Ս. Խ. Հ. Մ. յերկրի մակերեսույթը: Ցածր հարթությունների գերազանց քանակը: Բարձրությունները: Լեռների գասավորությունը ծայրամասերում: Ցածրությունների անվանացանկը՝ Արևելյան—յերկրական, Արևմտյան

— Սիբիրական, Արալու—Կասպյան: Բարձրությունները՝ Միջն-Ռուսական, Պրիվոլժսկի, Դոնեցկի, Միջին—Սիբիրական բարձրավանդակները: Լեռներ՝ Կովկասյան, Ղրիմի, Ուրալյան, Պամիրի, Տյան—Շանի, Ալտայան: Կամչատկայի հրաբուխներ:

3. Ս. Խ. Հ. Մ. ոգտակար բրածոները: Ընդերքի հարստությունների չետազոտված լինելը ցարական Ռուսաստանում: Խորհրդային կառավարության նվաճումներն այդ բնագավառում: Ս. Խ. Հ. Մ. տեղը ուրիշ յերկրների շարքում ամենանշանակոր հանածոների տեսակետից: Քարածխային ավազաններ՝ Դոնեցկի, Կովկասյան, Պոդմուկովյան, Տղվարչելի:

Նավթային հանքավայրեր՝ Բազու, Գրոզնի, Մայկոպ, Եմբա, Ուրալյան լեռների արևմտյան ստորոտը, Սախալին:

Յերկաթահանքեր՝ Կերչ, Կրիվոյ Ռոգ, Ուրալ (Բլագադատ, Մագնիստայայա, Խոլիլով): Կուրսկի մագնիսային Անոմալիա, Անդրկովկասյան: Զիաթուրի մարգանեցը: Անդրկովկասյան Դաշեստանի յերկաթահանքերը: Պղնձահանքերը՝ Ուրալ, Անդրկովկաս, Կազակստան (Կոռնըրադ):

Աղեր՝ ծովային աղ, փոսֆորաքարեր, Կալիումի աղեր, Կարբուրագի Գլաուբերյան աղ:

4. Ս. Խ. Հ. Մ. գետերն ու լճերը: Գետերի հարթության բնույթը: Նրանց առանձնահատկությունները, ձմեռային սաղցանալը, գարնանային վարարումը, ամառային ջրապակասությունը: Գետերի ոգտագործումը նավա գլուխցության, ելեկտրիֆիկացիայի և վոսոգման համար:

Ջրանցքներ:

Անվանացանկը.—ա) գետերի՝ չյուսիսային Դվինա, Փեշորա, Որ՝ Իրափշով, Յենիսեյ՝ Անգարայով, Լենս, Ամուր, Նեվա, Վոլխով, Սվիր, Դնեպր, Դոն, Վոլգա՝ Ուկայով և Կամայով, Ուրալ և Ամուր—Դարյա: բ) Ջրանցքների՝ Մարինյան Սիստեմը, Բելոմորսկո—Բալտիկյան ջրանցք, Վոլգա—Մոսկվա:

ՎՐԱՍՏԱՆԻ ՅԵՎԱՐԻԿԱՅԻ ԳԵՏԵՐՆ ՈՒ ԼՃԵՐԸ:

Վրաստանի գետերը—Քուր իր վտակներով՝ Կվիրիլլա, Ցիկնիս—Ծղալի և Տեխուրա Խոբի ու Խնգուր:

Ա. Բ ի ս պ ի ա յ ի ա յ ի գ ե տ ե ր ը : — Կողոր, Բզիք, Գումիս-
տա, Զյորնայա — Բեչկա, Բելայա — Բեչկա և այլն
Վ. ը ա ս տ ա ն ի լ ճ ե ր ը : Թբիսկուրի, Թոփորովոնի,
Թուժանի, Փալյաստոմի և այլն:
Արխագիայի լճերը՝ Ռիցա:

Ա. Խ. Հ. Մ. լճերը: Լաղովի, Ոնեգի, Ելտոնի, Բաս-
կունչակի, Կասպյան, Սրալյան, Բալխաշի, Բայկալի:

5. Ա. Խ. Հ. Մ. դիրքը ցուրտ և բարեխառն կիմայում:
Հյուսիսային Բեկուային ծովի ազգեցությունը: Մեծ և Ատլան-
տյան ովկիանոսների ազգեցությունը: Կիմայի փոփոխու-
թյունը արևմուտքից գետի արեկը. — ցամաքային կիմայի
հատկության ուժեղացումը գետի արեկը — „Սառնամանի-
քի բնեության Սիրիսիայում: Միջին Ասիայի անա-
պատճերը: Ա. Խ. Հ. Մ. յենթաարեկադային շրջանները: Ա-
հողա — բուսական զոնաները: Արխագիայի հողա — բուսա-
կան զոնաները:

6. Ա. Խ. Հ. Մ. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ.

Բնակչության թիվը ուրիշ յերկրների համեմատու-
թյամբ: Բնակչության խտությունը և նրա դասավորու-
թյունը Ա. Խ. Հ. Մ. յերկրամասներում: Ա. Խ. Հ. Մ. բնակ-
չության բազմազանությունը ըստ ազգային կազմի:

Միության քաղաքական բաժնումը. — միութենական
հանրապետությունները և նրանց մայրաքաջաները: Ան-
դրկովկասյան Ա. Ֆ. Խ. Հ. Լազմի մեջ մտնող հանրապե-
տությունները. — Վրաստան, Հայաստան, Աղրբեջան: Մի
քիչ մանրամասն կանգ առնել Արխագիայի և Վրաստանի
աշխարհագրության վրա: Ավանում հանրապետությունները՝
Թաթարական, Բաշկիրյան, Կաղակական, Կիրգիզյան, Յա-
կուտական հանրապետությունները:

IX. ԱՇԽԱՐՀԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՔԱՐՏԵԶԸ (2 ԺԱՄ)

Յերկու աշխարհ — յերկու սիստեմներ: Գլխավոր խմբե-
րիալիստական յերկրները: Հասկացողություն տալ Կապի-
տալիզմի միջին կարգի զարգացման յերկրների մասին:
Ա. Խ. Հ. Մ. արևմտյան և ամենամոտիկ յերկրները) Գա-

ղութները, կիսադաղութները և յենթակա յերկրները:
Անվանացանկը. — Հ. Ա. Մ. Ե. (Նյու Յորք և Վաշինգտոն),
Անգլիա (Լոնդոն), Ֆրանսիա (Փարիզ), Գերմանիա (Բեռ-
լին), Իտալիա (Հռոմ), Ճապոնիա (Տոկիո), Ֆինլանդիա,
Եստոնիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Զեխոսլավակիա,
Ռումինիա, Հնդկաստան, Չինաստան:

Ո Ւ Ս Ո Բ Մ Ն Ա Կ Ա Ն Պ Լ Ա Ն

Կիսագրագետների դպրոցների համար:
Ուսուցման գասընթացքը կիսագրագետների գալոցնե-
րում սահմանվում է՝ 480 ժամ քաղաքի համար (ուսուց-
ման 10 ամիս), իսկ գյուղի համար 432 ժամ (ուսուցման
9ամիս), և ամսական 12 պարապմուքի որ — ամեն մի պա-
րապմունքի որը 4 — ական ակադեմիկ ժամերից կազմված:
Առանձին առարկաների համար ժամանակը բաժանվում
և մոտավորապես այսպես:

Ա. ռ ա ր կ ա ն ե ր ը	քաղաք .	դժուղ
Մայրենի լեզու	120	112
Հասարակագիտություն	128	120
Բնագիտություն	72	60
Թվաբանություն	124	112
Աշխարհագրություն	36	28
ընդամենը	480	432




Ց Ա Ն Կ

յերես

1. Ծրագիր հայոց լեզվի	3 19
2. Ծրագիր թվաբանության	19 27
3. Ծրագիր բնագիտության	27 46
4. Ծրագիր աշխարհագրության	46 56

Հանձնված ե մամուլին 25/VI—34 թ. ստորագրված ե տպագրության համար 27/VI—34 թ. ծավալը 4 թերթ. չըսփ 60×75, թերթի տարրղությունը 30, 240 նշան. Գլավիտ 32—ա. Արդես-

հբառի տպարան. Տիրած 400 որինակ. Պատովեր № 2242



ՀՀ Ազգային գրադարան



NL0237510

54. 773